

82.09 [C] [unclear]

W-19

1248

U.C.

Аветъ Н. Агасиурзванди.

4116

АВЕТЪ
НИКИТОВИЧЪ
Дилмурзаниъ



82.09 [ՇԵՔԱՊՈՐ] *uy*

Ա-19

ՇԷՔՍՊՈՐ

ԵՒ ԻԻՐ

ՀԱՄԼԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Ա Ղ Բ Ի Ի Ր Ն

ՈՒ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ե Ա Պ Ա Տ Տ Ս Ի Ր Ե Տ

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԳԱՄԵԱՆ

Դերասան



7380
8

Ով որ կուզէ բանաստեղծին լաւ հասկանալ,
պէտք է նորա կենաց շրջանն ուսումնասիրէ:
Գէօրգէ:

Թ Ի Յ Լ Ի Զ

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ
ՕՐԲԷԼԵՆՆ ՓՈՂՈՑ, Տ. 1, 2
1887

Թարգմանութեան և թէ ազգաբնութեան իրաւունքը վերապահուած է հեղինակին:

2003

1038 8

Дозволено цензурою. 4 Апрѣля 1887 г. Тифлисъ.

Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

ԱՅՆ ԲՈՂՈՐ ՅԱՐԳԵԼԻ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱՍԻՐ ԱՆՁԱՆՅ՝

Որոնք զանազան քաղաքներում սիրով և
անձնուիրութեամբ նսլաստել են իմ թատերա-
կան ներկայացմանց յաջողութեանը, նուիրում են
ներկայս յարգանք և երախտագէտ սրտով

Հեղինակս

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գեղագիտութիւնն (Esthétique) ու բանաստեղծութիւնը՝ ազնուացնելով մարդուս, կըրթում են նորա միտքն ու հոգին և բարձրացնում են նորան այն աշխարհը, ուր մարդս գտնում է մխիթարութիւն սրտին, և սնունդ հոգւոյն:

Այն ժողովուրդը, որ ի բնէ զուրկ է այդ ձիրքերից, անմշակ և անմխիթար կըմնայ՝ չգնահատելով և չօգտուելով այն ամեն հրաշալիքներից, որ Արարիչը դրել է ընդհանուր ստեղծագործութեան մէջ:

Գեղեցկին ճաշակը՝ նրբացնելով հոգւոյն գգացումները, ուղղում է բարքերը և բարոյականացնում է նոցա:

Կեանքի գեղագիտական և բանաստեղծական կողմերը եթէ ընդունակ լինինք գրտնել ու պահպանել, դորանով՝ հաւատացէք, մասամբ կըմեղմացնենք նորա բազմակողմանի հոգսերն ու վշտերը:

Ինքն՝ Աստուած դրել է մարդկանց մէջ այդ շնորհալի և օգտաւէտ ընդունակութիւնը. ոմանց նկարչի, այլոց քերթողի և ոմանց երաժշտի տաղանդն ու սրբազան կրակն ու խանդը պարզւելով: Կարծես նախախնամ Տէրը զթալով ողորմելի մարդկութեան, միով բանիւ շնորհել է նորան՝ նկարիչք, քերթողք և երաժիշտներ, որպէսզի իրենց կրակովը ոգևորեն կենաց անպտուղ և ցամաք պարտէզը. որ իրենց հոգւոյ արդիւնքովը ոռոգեն և արդիւնաւորեն նոյնպէս այլոց հոգիները՝ բանալով նոցա առաջ գեղեցկին, բարւոյն և ճշմարտին ճանապարհը:

Այդ տաղանդների նպատակին համար են կառուցուած բոլոր ակադէմիայք, դպրոցք, թատրոններ և թանգարաններ, որոց մէջ բազմութիւնը դիմում է խուռն՝ սփոփուելու, զարգանալու, գեղեցկին ծարաւն բարոյապէս չագեցնելու, միանգամայն կրթելով ճաշակն ու միտքը:

Հայը նոյնպէս, մանաւանդ այս վերջի տարիներում, հետևելով լուսաւորեալ ազգաց օրինակին, մի առանձինն և բնիկ համոզմամբ՝ սիրելով գնահատում է բանաստեղծութիւնը և մանաւանդ թատերի արուեստը: Եւ որ գովելին

է՛ մասնաւոր համակրութեամբ սիրում է Ղէքսպիրին, եռանդով ողջունում է նորա երկասիրութեանց ներկայացումները, միմիայն ողևորուելով թատրոնում, որովհետեւ մեզանում շատ քիչերն են ծանօթ նորա անձնաւորութեան և ասպարիզին հանդամանացը հետ:

Տեսնելով Ազգիս այս սէրն ու եռանդը՝ առ այն տիեզերահուշակ հանճարն, քաջալերուեցայ. և ուզելով նոցա լաւ ծանօթացնել Ղէքսպիրին, աշխատեցայ որոշ տեղեկութիւններ հաւաքել նորա վրայօք, և հաղորդել Հայ հասարակութեան:

Ծանօթացնել նորա կեանքի, և երկասիրութեանց հետ՝ առ այժմ, մասնաւորապէս Համլէթին *), որովհետեւ բոլոր իւր թատերգութեանց մէջ ամենագլխաւորն և վիճելին է համարուած:

Թէպէտ բոլոր նորա գործերը մի յաղթական կոթող կազմած են քերթողական ասպարիզին մէջ, որնոր ժամանակը ըստ իւր յատ-

*) Թարգմանեալ ի Հայ պարոն Սենեքերիմ Արծրունուց եւ պարոն Աւետիք Եղեկեանից:

կութեան չէ կարողանում նորան ևս հնացնել ու քանդել, ընդհակառակն նա միշտ նորանալով՝ երկինք է բարձրանում: 1589-ից մինչև 1887 թ. գրեթէ երեք ահագին դարերի շրջաններում ապրել են նորա գործերը. և ամեն տեղ, ամեն օր՝ ամենայն մարդկանց թերութեանցը և յատկութիւններին հայելի են եղել: Ոչ մի բան չէ կարողացել մթագնել այդ հայելին. ընդհակառակն միշտ գործածուելով ակալացել է իւր փայլը, ուր խորշոմեալ ծերունու պատկերից սկսեալ մինչ իսկ մատաղ կուսին ամենանուրբ դիմագծերն անգամ անդրադառնում են բացայայտ, խստաբարոյ և կամշոտ Վիր թագաւորից. մինչև իսկ երիտասարդ, մռայլ և մեղամաղձ Համլէթի հոգւոյն տիպարը երևում են նորա մէջ:

Համլէթը՝ այն երկդիմի խորիմաստ, և ճակատագրին դժբախտ մի խաղալիկ դարձած իշխանը, որի առաջին անգամ ներկայացուած օրիցը մինչև այսօր, բոլոր հեղինակաց, ոգբերգու դերասանների և քննադատաց, մի հանելուկ է դարձել, ահագին բանակուոց և վէճերի աղբիւր և առիթ:

Ամենքն էլ նորա մասին տուել են իրենց զանազան կարծիքները. դորա պատճառաւ Քերմանիայում ահագին վէճեր են բացուել, և հազարաւոր հատորներ են տպել՝ կուսակցութիւններ և ընկերութիւններ կազմելով:

Պատմութիւնը հաղորդում է, թէ Անգղիայում, որ հայրենիքն է Ջէքսպիրի, այնքան մեծ չէ եղած գրագիտաց յուզմունքը, որքան Քերմանիայում *):

Յայց այդ խուռն և բազմազունակ քննագատութեանց ազմուկը յանկարծ խափանուել է Վիլհէլմ-Մէսթէրի պատգամախօս վարդապետութեան դաշն ձայնիցը, Էրվինուսի խոհուն և լուրջ գատողութիւններից. որոց երկուսն էլ մրտնելով բանաստեղծի ժամանակակից շրջանի մէջ, քալլ առ քալլ հետեւեցին նորան՝ զննելով նորա կեանքը, գործերն ու կարդացած հեղինակները, և այնպիսով տուին իրենց խելացի վճիռը:

Անգղիայում նոյնպէս գտնուեցան լուրջ

*) Շէրէր, քննադատական հետազոտութիւնք ի վերայ Շէքսպիրի:

քննադատներ, որք լուեցրին տգիտաց շաղիադ-
 փանքը: Այն քննադատներն էին. Քօլրիչ, տիկ.
 Ճէմսըն, Հէնրի Մաուցլի, Հալլամ, Քօլրիէր, Մար-
 դալ, Հալիվէլ և այլք. Բէլէկրինօ Ռօսսի իտա-
 լացին. Լէսսինգ, Գէօթէ, Էրվինուս, Էշէնբուրգ,
 Չլէգէլ, Վիլանդ, Կարլ Էլգէ, Վէրդէր, Քրէյտիկ,
 Հէրդէր, և այլն գերմանացի գրադէտները. ու-
 սաց Բէլլինսկին. իսկ գաղղիացոց մէջ ամենա-
 նշանաւորներն են՝ Իպօլիտ Թէն, Վիլլըմէն, Գի-
 դօ, Լիթրէ, Փրանսուա Հիւգօ, Ա. Մէզիէր և
 Ա. Բիւխնէր:

Փրանսուա Հիւգօ *), որ քսան տարի
 բնակելով Անգղիայում, յաճախելով փոշոտ գրա-
 դարաններ, հին ձեռագիրներից հաւաքել է ան-
 հուն տեղեկութիւններ, և թարգմանել է Չէքս-
 պիր ամենայն հաւատարմութեամբ, և սաստիկ
 հետաքրքիր ծանօթութիւններով:

Իսկ Աղէքսանդր Մէզիէր **), որ օտար

*) Fr. Hugo. Les Deux Hamlet, Paris 1865.

***) A. Mézières. Shakespeare. ses oeuvres
 et ses critiques, ouvrages, couronné par l'acadé-
 mie F. Paris 1882.

մատենագրութեան դպրութեանց վարպետն է Փարիզի Ակադէմիայում, տարիներով դասախօսութիւն էր կարդում Զէքսպիրի մասին Փարիզի հասարակութեան առաջ, և որոց յետոյ բոլորն հաւաքելով ի լոյս ընծայեց:

Աղէքսանդր Բիւխնէր *)՝ Կատնի Ակադէմիայի օտար մատենագրութեան դպրութեանց վարպետը, շատ ընդարձակ տեղեկութիւններով հրատարակեց «Համլէթ Գանիմաքարցին» կոչուած գիրքը:

Այս վերոյիշեալ երեք գրագէտներն էլ օգտուել են իրենցից նախընթաց նշանաւոր՝ անգղիացի, գաղղիացի և գերմանացի գրագիտաց խուզարկութիւններիցը՝ քաղելով նոցանից ճշմարտանման կարծիքներն ու ծանօթութիւնները՝ հաղորդել են մատենագրական աշխարհին իրենց սեպհական կարծեացը հետ:

Ես էլ քիչ շատ ուսումնասիրած լինելով Զէքսպիրը և ճանանչելով նորա գործոց արժէքն ու գեղեցկութիւնը, խոնարհաբար հա-

*) A. Buchner. Hamlet le Danois. Paris 1878.

ղորդում եմ նոցա ընթերցասէր Հասարակութեան. իմ կարգին՝ ես ևս օգտուելով վերոյիշեալ Հեղինակաց գրուածներէցր: Իսկ յայտնելու համար իմ առանձին կարծիքը, յատկապէս Համլէթ ողբերգութեան մասին, ինձ զօրավիզն և բնաբան եմ դրել երևելի Հեղինակաց վճիռն ու դատողութիւնքը:

Քիչ ժամանակից կրկին ի լոյս կընծայեմ նորանոր Հետազօտութիւնք. Յ[թէլլօի *), Արքայ Ղիրի **), Գրիբաէդօվի Խէչոյ վեշտ ***), կատաղերգութեան, և ընդհանրապէս թատերական արուեստի վրայօք:

Պէտրոս Հ. Արամեան:

*) Թարգմանեալ ի Հայ. պ. Ս. Սուլխանեանից:

***) Թարգմանեալ ի Հայ. պ. Ս. Արծրունուց:

****) Թարգմանեալ ի Հայ. պ. Կ. Տէք-Ստոռաձատրեանից:

ՇԵՔՍՊԻՐ

ԵՒ ԻԻՐ


ՀԱՍԼԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

Ա. Ղ. Բ. Ի. Ի. Ր. Ն.

ՈՒ

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ԶԷՔՍՊԻՐ

Ե Ի Ի Ի Բ

ՀԱՄԼԵԹ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ԱՂԲԻԻՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻԻՆՆԵՐԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Շէքսպիր:—Ծննդեան տեղին:—Նորա կեանքն ու դաս-
տիարակութիւնը:—Աղքատ բանաստեղծ:—Տառապանք իւր
ասպարիզի մէջ:—Նոր գիրք:—Լիլի, Մարլով եւ Բիւր-
բէյն:—Զարգացումն հանճարի:—Թատեր ու բեմին դրու-
թիւնը:—Պաշտպանք եւ բարեկամք:—Շէքսպիրի պատճա-
ռած յեղափոխութիւնը Թատեր արուեստի մէջ:—Զանա-
զան ժամանակակից մատենագիրք:—Նոցա կարծիքը:—Թըշ-
նամիք:—Վոլթէրի նամակը առ Լահարի:—Շէքսպիրի
առտնին կեանքը:—Իւր Աննա ամուսինը:—Սէր եւ նա-
խանծ:—Մահն ու տապանագիրք:

Պարոն Հալիվելլ Անգլեացի ճանապարհորդ
մատենագրել, Մէգլէրել, Ֆ. Հիւգօյլ եւ Բիւսնէրել
խուզարկութիւններէց առաջ՝ չէր կարելլ որոշ ասելլ

Թէ քնչ դաստիարակութիւն է առած Շէքսպիր, քնչ էին նորա կենաց և քերթողական ասպարէզի մանրամասն հանգամանքները, և թէ քնչ վիճակի մէջ էր թատեր արուեստը, երբ առաջին անգամ մտաւ նորա մէջ: Այժմ այդ բոլորը ըստ կարելի պարզուած են:

Վելհէլմ Շէքսպիր ծնաւ Սթրաթֆորթ, Ալօ-նի վրայ, Վաուլլեքի կոմսութեան մէջ, 1564-ին Ապրիլի 23-ին:

Նորա ընտանիքը յետին ծայր չքաւորութեան հասած էր 1578-ին, այն աստիճան՝ որ իւր թեմի ժողովրդապետը ստիպուեցաւ հարկ չպահանջել նոցանից: Ինքն իսկ Շէքսպիր, ըստ Օպրէի կենսագրութեան, խնայողութեամբ ապրելու համար հարկադրուած օգնում էր իւր մսագործ հօրը:

Արդէն 1583-ին, տասն և ինն տարեկան հասակում ամուսնացած էր և հայր ընտանեաց. հագիւ կրքաւէր իւր վաստակն ու չնչին շահը ընտանեացը ապրուստին, թէպէտ մանկութիւնից երազացնոր և մտածող լինելով՝ սիրում էր ընթերցումը. այդ նորա միակ միտքարութիւնն էր, այն. բայց գերք գնելու համար փող է հարկաւոր. սակայն այդ գրքի տրուելիք դումարը պէտք կըլինէր երբեմն գործածել տան ծախքերի, Աննային— իւր կնոջ մի նոր դգեստ գնելու, կամ փոքրիկին դայեակ վարձելու համար:

Քանիցս անգամ նստել է նա յուսահատ իւր

տանը սառն կրակարանի մօտ, ծնօտը ձեռքին մէջ առած, գլխակոր, ինչպէս մի արծիւ թևարեկ, որ չէ կարող սլանալ իւր ընդարձակ եթերաց տարածութեան մէջ: Քանիցս անգամ խեղդուել են իւր հառաչանքները՝ այն տանը մերկ սլատերին մէջ արձագանք չգտնելով. այն աղքատիկ տունը, որ այսօր Անգղիացւոց համար թագուհու պալատից կամ Վէսմինստրի մայր եկեղեցւոց աւելի թանկագին է, ճօխ և սլատկառելի: Հալիվէլ ասում է՝ այն տունը շրջապատուած է փառաւոր կաղնիներով, թաւշանման մարգագետինք տարածվում են նորա շուրջը. և այն լուրջ անդորրութիւնը, որ տիրում է այնտեղ, գրաւում են մարդուս՝ սլատկառանք ազդելով նորա սրտին, և անդիմադրելի կերպով անջնջ տպաւորվում են երեւակայութեան մէջ:

Այդ բոլորը տեսնելով՝ չէ կարելի չլնել երկիւղած չարգանօք այդ վսեմ հանճարը, որոց մտազբաղ և վառվռուն աչքերը զմայլմամբ սևեռած մնացել են այդ գողտր բնութեան վրայ:

Անհնարին է առանց սառսուռի մտնել այն սենեակը, որ թէպէտ տխուր և աղքատիկ երևոյթունի, սակայն ամեն օր լիքն է այցելողներով իբրև մի տաճար ուխտագնացութեան:

Կան այնտեղ զանազան մանր առարկաներ, որք ժամանակաւ Շէկսպիրին են սլատկանած և որ սաստիկ գրաւում և զրդուում են Անգղիացւոց

Հետաքրքրութիւնը, որոնց մեծ մասը իբրև սիրահար հնութեանց, աւելի կըցանկային այդ առարկաներից մինն ունենալ, քան թէ Շէքսպլերի երկասիրութեանց փառաւորակագմ մի տպագրութիւնը և կարդալ նոցա. սակայն այդ տան սատերի մի քարը, մի խիճն անգամ մեծ գին ունի նորա համար՝ որ գիտէ թէ այնտեղ հանճար է ծնել:

Ամեն քայլափոխ, ամեն տեղ Սթրաթֆորթում չիշեցնում են Շէքսպլերը, կարծես նորա շնորհիւր սրբագործուած լինի այն երկիրը, ուր այնքան տառապանք և վիշտ կրելով՝ մտխիթարուել է միայն բնութեան տեսարաններին ներշնչած զմայլմամբը և իւր բանաստեղծի աստուածալառ խանդովը:

Չնայելով իւր աղքատութեանը, ասում է պատմագիրը, յաճախում էր մի խալական դարոց գանազան հին լեզուներէ հետ ծանօթանալու համար, և ինչպէս որ ինքը խոստովանւում է, աղքատութիւնից ստիպուած, ուզում էր գրել թատրոնի համար, բայց ում դիմէր, ինչպէս սկսէր գործին, ոչ Հոմերոսն էր կարդացել, ոչ Սոփոկլէսը, ոչ Էսքիլէսը, միայն տեղեակ էր Հերոդոտի, Թուլիզեոտի և Պլուտարքի:

Այն, չունէր մի դաստիարակ, մի մշակ, որ մի սերմ նետէր իւր հանճարի պարարտ և բնդարձակ դաշտի վրայ, որ անկասկած մի օր առատ և անմահ

Հունձք պիտի պարզեւէր մարդկութեան ապագայ սերունդին:

Գժուար կըլինի այստեղ միառմի նկարագրելը, թէ ինչ սարսափելի եղաւ այդ մաքառումը Հանձարի և կարօտութեան մէջ:

Այդ բանը մեզ էլ կարող չէ ծանօթ լինել իւր բոլոր պարագաներովը, որոց գաղտնիքն ամփոփուած է չաւիտենականութեան գերեզմանական լռութեանը մէջ:

Ծննդեան խթման օրն էր երբ Շէքսպիր յենած էր իւր պատուհանին, տեսաւ մի մանրավաճառ, որ գանազան իրեղէններ էր ծախում. և միջի այլոց կար մի գիրք ևս. մի գիրք, որ իւր նորութեամբը չէր նմանում մինչև այն ժամանակ Շէքսպիրի կարդացած գրեանց. այդ Բէլլըֆօրէի պատմութեանց հաւաքածուն էր, թարգմանեալ Սաքսօ Գրամաթիկոսից:

Շէքսպիր չգիտանալով այլ ևս՝ տուաւ իւր բոլոր ունեցածը և գնեց այդ գիրքը և բանալով կարդաց առաջին երեսի վրայ այս վերնագիրը.

«Ինչպիսի խորամանկութեամբ Ամլէթուս իւր հօրը Հորվանտիլի սպանութեանը վրէժն առաւ, որ սպանուած էր Ֆէնիօնից, և նորանից յետոյ թագաւորեց Գանիմարքայի վրայ: Եւ թէ նորա պատմութեան գանազան պատահարց նկարագիրը»:

Գորանից յետոյ այս գիրքը եղաւ նորա միակ զրօսանքն ու մտածութիւնը, որնոր շատ

անգամ խանգարվում էր գործերի վատ դրութիւնից, ապրուստի անհրաժեշտ հոգսերից: Պատմութիւնը կարծում է որ եթէ այդ կենաց դժբախտութիւնները չլինէին, 1578-ին Շէքսպիր չէր հեռանալ իւր սիրելի ծննդեան տեղիցը և չէր գրիւ այն գլուխ գործոց թատրերգութիւնները:

Շէքսպիր սերտ կերպով կապուած էր իւր ծննդեան հողին, այդ նորա համար երկրիս ամենագոյտր անկիւնն էր՝ մի դրախտ, և իւր նստողական կեանքովը զանազանվում է բոլոր միւս Անգղիացի բանաստեղծներից: Շաուսէր, Սպէնսէր ճանապարհորդեցին միշտ. Մելթոն այցելեց Քաղղիան և Բտալիան և գուցէ Յունաստան էլ երթար, եթէ յեղափոխական լուրերը նորան Լոնդոն չհրաւրէին. Բայրն մահ է ածում իւր Սկեստրիկութիւնը արևելքի մէջ. միայն Շէքսպիրն էր, որ չհեռացաւ իւր հայրենիքիցը և ծնած տեղից. նորան ծանօթ էր միայն Սթրաթֆորթից Լոնդոն տանող ճանապարհը և նորա շրջակայքը. և այդ բնութեան՝ իւր վառ երևակայութեան վրայ արած ազդեցութիւնն անդրադառնում է շատ անգամ իւր թատրերգութեանց մէջ:

Առաջին անգամ երբ Լոնդոն հասաւ, արդէն թատերասիրութիւնը տարածուած էր հասարակութեան մէջ, արդէն Շէքսպիրի արեգակիցն առաջ փայլում էին աստղեր թատրերգութեան հորիզոնին վրայ. կուսակցութիւններ դոյացած էին, վի-

Ճուժ էին, թէ ընչ փոփոխութիւնք և ձև սկսաք է մտցնել թատրերգութեան արուեստի մէջ:

Շէքսպիր նայում էր այդ բոլորին հեռուից. նա՛ որ կոչուած էր այդ մեծ յեղափոխութիւնը գործելու, մի կողմ առանձնացած իւր չքաւոր վիճակի մէջ համեստ՝ ականատես և լուռ վկայ էր այդ բոլոր եղելութեանը՝ չգիտնալով բոլորովին թէ մի օր ինքը պիտի լուծէր այդ հանելուկը իւր Աստուածային հանձարով, որի (ինչպէս ամեն հանձարեղ մարդիկ) արժէքը չէր իմանում: Մինչև անգամ ասում են թէ իւր ապրուստը ճարելու համար ստիպուած էր թատրոնի դռան առաջ ձիապանի սաշտօնը վարել. բայց այդ բանը հաստատապէս ստուգուած չէ:

Այսու հանդերձ նա շարունակում էր աշխատել գրական փորձեր անել, և վերջիվերջոյ դիպուածով ծանօթացաւ կլասիքական ողբերգութեանը կուսակիցների դասին պատկանող երկու նշանաւոր անձինքների հետ—Լիլի և Մարլով. այս երկու թատրերգու բանաստեղծները մեծապէս նպաստեցին Շէքսպիրի հանձարի գարգանալուն և հետզհետէ գտնելով պաշտպաններ և ծանօթանալով Բիւրբէյճի հետ, Լոնդօն գնալուց երկու տարի յետոյ մտաւ նորա խմբի մէջ և սկսաւ իրրև դերասան հասոյթից մաս առնուլ:

Այն ժամանակները թատրոնի գործն այնքան չաջողակ և արդիւնաւոր եղաւ, որ Բիւրբէյճ

Լոնդոնի գլխաւոր կամուրջի մօտ հիմնեց իւր Կլօբ անուն թատրոնի սրահը, որովհետեւ ժողովրդի անյագ թատերասիրութիւնն այն աստիճանի էր հասել որ մայրաքաղաքում գտնուած տասն և մէկ թատրոնները հազիւ բաւականացնում էին նորան:

Այն խումբը, որի մէջ մտաւ առաջին անգամ Շէքսպիր, ամենանշանաւորն էր և այնպէս էլ մնաց միշտ, որնոր կազմուած էր սենեկասլան լորդ Լէյչեստէրի խմբի դերասաններից և որն յետոյ թագուհու խումբը կոչուելու փառքին արժանացաւ:

Ռիչարտ Բիւրբէյձ՝ Անգղիայի այն հռչակաւոր հանճարը, որի համբաւը մանկութիւնից լսած էր Շէքսպիր, անշուշտ առիթ էր քաղած նորա տաղանդից, զանազան դիւցազունների տիպեր ստեղծելու, որոնց այնքան ճշտութեամբ և նկարչական կերպով ներկայացնում էր Բիւրբէյձ. այնուհետեւ Շէքսպիրի վսեմ հոգին ինչպէս մի աստուածաւառ հրաբուղիս սկսեց դուրս պորթկալ իւր հանճարի լաւան, որին երևելի անձինք պաշարելով բովանդակեցին իրենց բարձր պաշտպանութեան շրջանի մէջ և ծաղկեցրին:

1589-ին Շէքսպիր Բիւրբէյձի խմբի առաջին անգամը դարձած և փառաց գագաթն հասած էր: Եւ վերջապէս այդ խմբով էլ ներկայացուց իւր գլուխ գործոց Համլէթը, որին Բիւրբէյձ իբրև քաջ նկարիչ և ամենաճարտար մի դերասան

լինելով՝ անմահացուց այդ տիպը, ինչպէս բոլոր Շէքսպիրի ստեղծագործութիւնքը, որը կեանքի և քերթողական ասպարէզին մէջ օգնականը և նեցուկն էր, և Շէքսպիրի մահէնց յետոյ, երեք տարի միայն ապրելով, վախճանեցաւ 1619-ին:

Բիւրբէյճի թատրոնը թէպէտ և լաւագոյնն էր Լոնդոնի մէջ, բայց և այնպէս շատ կոպիտ և աղքատ, թէ շէնքի և թէ բեմական տեսարաններն կողմից. ժողովուրդը, ազնուականն ու ռամիկը խառնիխառն կըլքցուէին սրահի մէջ. տասը խալացի երաժիշտներ մի եղանակ նուազելուց յետոյ, փող հնչելով կամ մի դրօշակ պարգելով, անմիջապէս սկսվում էր խաղի յառաջաբանը. և որովհետև բեմը չունէր մի որոշ տեսարան, մի տախտակի կտորի վրայ ծանուցում գրելով կըկատէին ի դիտութիւն հասարակութեան թէ բեմը դօրութեամբ ներկայացնում է այս ինչ պալատը կամ անտառը, բանտ, դահլիճ, գաւիթ և այլն: Վարագոյրը դեռ չբացուած՝ հասարակ դասակարգի ժողովուրդը սրահի մէջ լիքը՝ գարեջուր խմելով, ծխելով, կամ թուղթ խաղալով կ'ըբօսնուր, և կամ առաջին կարգում բազմած ազնուականներն հետ կատակներ անելով և սրախօսութիւններ գլորելով, որ միշտ կըվերջանար դիւրաւլառ նիւթեր անձրևի պէս տեղալով միմեանց վրայ:

Այս բոլոր աղմկին վերջ դնելու և հասարա-

կութիւնը հանդարտեցնելու համար խումբը մի ծաղրածու միմօսի բեմ կըհանէր, որ իւր ծաղրաբանութեամբ և հտպտանքներով զբաղեցնէ հասարակութեան. և այդ միմօսը անշուշտ Թառլըթօնը կըլինէր՝ Անգղիայի առաջին կատակաբան դերասանը, կամ իւր ընկերներէց մինը, որոնք առանձինն արտօնութիւն ունէին խաղի մէջ հեղինակի բնագրից դուրս իրենց կողմից չանպատրաստից կատակախօսել. մանաւանդ Թառլըթօն, որ Թագուհուն էլ սիրելի եղած էր՝ իւր ըստ պատշաճի կատակաբանելովը:

Խաղի վերջումն էլ սէտք էր ժողովրդից սերուած մի խեղկատակ՝ Թմբուկների աղմկալից Թնդիւններով կաքաւէր բեմի վրայ:

Ողբերգութեանց համար սև կտաններով բեմը ծածկում էին, բեմի խորքում էլ մի ատաղձ կամ որևէ փայտեղէն մի շէնք կառուցանելով, որ տեսարանի բերման համեմատ՝ վանդակի, պատուհանի, դռան, լեռան և կամ մի աշտարակի տեղ էր ընդունվում. խումբը խաղը չսկսած, տեսարանաց բացակայութիւնը լրացնելու համար կըխընդրէր հասարակութեանը, որ երևակայութեամբը բարեհաճի ենթադրել, [թէ բեմի վրայ կայ դաշտ, անտառ, պալատ կամ դահլիճ *]:

Բայց Շէքսպիրի գործոց արժանաւորութիւնը

*) Մէղիէր. Շէքսպիր, իւր գործերն ու քննադատները:

Նիւթական միջոցները պակասութեամբ ոչինչ չէր կորցնում. բեմական ատաղձներէց ոչ մի օգուտ չսպասելով միմիայն իւր հանճարէց էր աւելացնում տեսարանաց հոգեկան գեղեցկութիւններ, որոնք զգալի չէին անում բեմական զարդերի բացակայութիւնը:

Աղէքսանդր Մէզլէր ասում է, թէ «շատ անգամ տեսնելով Comedie française-ի մէջ լուրջ ներկայացումներ, մտածել եմ, թէ արդեօք լաւագոյն չէ՞ր լինիլ հանդիսականաց աչքերը շացնելով զբաղեցնելու տեղ միտքն ու ուշադրութիւնը հրապուրել»:

Շէքսպիրի համար նպաստաւոր էր մինչև անգամ բեմի աղքատիկ վիճակը՝ իւր գործերովը միայն նորան զարդարելու համար: Նա իբրև Ռէմբրանտի *) ոճին հետևող մի մատենագիր, ստուերով ծածկում էր իւր գործող անձանց շուրջը, որպէսզի բեմի վրայ գլխաւոր կէտը միայն աչքի գարնէ, միայն իւր հանճարի մարգարիտները փայլեն:

Խումբը կազմուած էր բանիբուն և շատ քիչ զբաղէտ երիտասարդներէց, բոլորն էլ հոգւով միմեանց հետ միացած, եռանդազին և վառվռուն խանդով աշխատում էին իրենց վարդապետի հանճարեղ երկասիրութիւնքը ներկայացնել, որ լայն ճակատը ափին մէջ առած և միւս ձեռ-

*) Հոլլանդացի երևելի նկարիչ:

քը գրելչ, իւր ընկերացը եռանդին հիւթ էր մատակարարուծ: Բոլորի աչքերը սևեռած նորա գունատ երեսին, ուր վիշտք և արուեստի սրբազան հուրը դրել էին իրենց դրօշմը, քաջալեր և խրախոյս էին գգուծ իրենց սրտին մէջ:

Լորդ Լէյչէստերից յետոյ յաջորդաբար պաշտպանեցին խուճրը զանազան երևելի անձինք. առաջինը Սէսէքսի Կոմսը, երկրորդ՝ Թագուհու սենեկապան լորդ Ռէթկլիֆ և նորա մահից յետոյ լորդ Հէնրի Կոնտսօն:

Սյս վերջինս այնքան սիրահար էր Թատեր արուեստին, որ խուճրին մէջ դերձակի պաշտօն սկսեց վարել՝ դերասանաց զգեստները ձևելով և կարելով. և նոցա հետ սկսաւ Թափառական ման գալ, երբ խուճրը հարկադրուած էր հեռանալ Լոնդոնից 1592 Թուականին պատահած Ժանտախտի պատճառաւ:

Շէքսպիր շատ ունեցաւ պաշտպաններ և բարեկամներ, մանաւանդ դոցա շարքուծ կայ մինը, որին անմահացրած է Շէքսպիր իւր քսան և ութը ոտանաւոր նուագների մէջ. քննադատներից ոմանք կարծուծ էին թէ այդ անձը Փէմբրուկի Կոմսը լինէր, սակայն այլք, որոց թուումն է և Մէգրէր, ապացուցանուծ են թէ նա լորդ Սուլթամթոնն է, որ բուռն և անկեղծութեամբ սիրեց Շէքսպիրին և պաշտպանեց նորան և նոյնպէս նորա ընկեր Բիւրբէյճը: Երբ 1603-ին հալածուծ էր

նոցա Արքայական խորհրդի ատեանը, Սուլթամ-
թոն ասաց. «Պաշտպանում եմ ես դոցա այն
պատճառաւ որ մինը Անգղիայի Ռոսցիուսն է, իսկ
միւսը իմ սերտ բարեկամս»:

Եւ ո՞վ կարող էր չպարծենալ Շէքսպլրի նը-
ման մի անձի բարեկամութեամբը, որ հա-
սարակական կեանքի մէջ ազնիւ էր և բարի, իւր
աշխատութեանցը արդիւնքից հօրը պարտքե-
րը վճարեց Սթրաթֆօրթում, որ գիտէր սիրով
վարուել բոլորի հետ, և որ՝ չնայելով իւր համես-
տութեան, տիեզերքի ամենամեծ հանճարն էր,
որ հակառակ հին թատերագիտաց, Սոփոկլի և
Արիստոփլի օրէնքներին, ահագին մի յեղափոխու-
թիւն մտցրուց, անսպասելի մի ուղղութիւն տալով
թատեր արուեստին:

Նա քանդեց մինչև այն ժամանակ լրջու-
թեամբ պահպանուած աւանդական սովորութիւ-
նը, տեղի, ժամանակի և միութեան կապը, որ
պէտք էր անխախտ պահուէր ամեն թատերգու-
թեանց մէջ:

Հնութեան փոշին և անհարթ քարերն առ-
նելով, մի նոր տաճար կառուց արուեստին, դիցա-
բանական արձանները և ռոմանթիքական կեղծ
դիւցազունքը մտից և ոսկրից շինուած, իրական
մարդիկներ դարձան իւր հանճարի լուսաւոր ճա-
ռագայթի տակ կերպարանափոխուելով: Եւ այդ
կենդանի մարդիկութեան ամբոխը՝ առանց խտրու-

Թեան՝ Թագաւորը հօլուրն, ազոուականը գւղա-
ցուն, հարուստը մուրացկանին, կոյսը հոմա-
նուն, քրիստոնէութիւնը կռապաշտութեան հետ,
հին դարը միջինին և նորին հետ խառնելով
և Սովոկլէսի, Էսքելէսի, Հոմերոսի, Վիրգի-
լիոսի, Օվիդիոսի, Պլուտարքի, Հօլինձէթի, Հալլի,
Շառլէքի, Սաքսօ Գրամաթիկոսի, Բէլլըֆօրէի,
Մօնթէնի, Արիստօֆանի, Լուցիանոսի, Ճիրալտօ
Չինթիօյի, Բօքաչչիօյի, Բանտէլօ Նաբօլիտանցիի,
Բորտօցի Լուրճիի և Ուրբինօցի Լօլիոսի գործերը
կարդալով, հաւաքեց և արաւ իւր Թատրերգու-
թեանց հիւթն և նիւթը՝ ներկայացնելով մեզ ամ-
բողջ մարդկութիւնը իւր հոգւոյ և սրտի բոլոր
գաղտնիքներովը, բոլոր պակասութիւններովն ու
բոլոր առաւելութիւններովը պատկերացուց Թա-
տերական հայելիին մէջ:

Եւ ո՞վ կարող է չզարմանալ նորա Թատրե-
գութիւնները կարդալով, որոց իւրաքանչիւրը գե-
ղեցկին, բարւոյն, նկարչականին և գեղարուեստի
տաճարին՝ աղամանդեաց անխախտ սիւները կա-
րող են համարուել, որոնց գլխաւորներն են. Համ-
լէթ, Արքայն Լիւր, Մաքբէթ, Սթէլլօ, Ռօմէօ Ճիւ-
լիէթ, Վենետիկի վաճառականը, Յուլիոս Վեսար
և այլն:

Շէքսպլը՝ թէ իւր ժամանակին, և թէ մա-
հից չետոյ, ունեցաւ թշնամիներ, և իւր գրու-
թեանց չհաւանող անձինք, որոնց թուումն են՝

մեծն Ֆրէդէրիկ, Կռին, Վոլթէր, Թովմաս Լիւսի
և Սեր Ֆիլիպ Սիդնէյ: Այս վերջինը պաշտպանում
էր հին ողբերգուներին ոճը և հրատարակեց «Բա-
նաստեղծութեան Չատագով» անուն գրքոյիը, որ
իւր մասհից իննը տարի չետոյ լոյս տեսաւ:

Իսկ Կռին Շէքսպիրին կոչում էր բեմի խան-
գարող. Թովմաս Լիւսի ծաղրում էր նորան. իսկ
Շէքսպիր խայտառակեց Լիւսիին իւր «Ձուարթա-
բարոյ կանայք Վինտորի» թատերգութեան մէջ
Շալով տխմարի տիպարը նորա անձնաւորութեան
տակ ներկայացնելով:

Բայց ամենից նշանաւորը, Վոլթերի կատա-
ղութիւնն է Լըթուրնէօր անուն համեստ գրագէ-
տին դէմ, որ իւր տպարանի մէջ առաջին անգամ
թարգմանելով ի լոյս բնծայած էր Շէքսպիրի գոր-
ծոց գաղղերէն թարգմանութիւնը 1776-ին:

Վոլթէր ասում է Լահարփին *) «Ահ, դուք
Շէքսպիր էք թարգմանում, ուրեմն դուք մի փը-
ցուն անպիտան էք, առաւել քան անպիտան, ան-
միտ տխմար էք, մի չիմար անասուն էք, դուք
Գաղղիոյ ամօթն էք, արժանի հասարակութեան
թուրումուրին. ձեզ հարկաւոր է իշու գղակը
գլուխնիդ, գողի նման բանտ ուղարկել, գուցէ և
մի հրէշ էք»... Մի ուրիշ տեղ էլ նոյնպէս. «Նթէ
գլտնաք ինչպէս կատաղած եմ այդ Լըթուրնէօրի

*) François Hugo, les Deux Hamlet:

դէմ. սարսափելին այն է, որ Թշուառականը մի կուսակցութիւն ունի Գաղղիոյ մէջ, և ի լրումն դժբախտութեանց, արիւնս վրդովվում է, երբ. յիշեմ որ ես էլ առաջինը այդ Շէքսպիրի մասին խօսողը, ես էլ որ առաջին անգամ Գաղղիայում ցոյց տուի այդ միքանի մարգարետները, որ գտել էի նորա գարշահոտ և ընդարձակ աղբիւսին մէջ: Նրբէք չէի մտածել որ մի օր ախամայ ոտնակոխ պիտի անեմ Ռասինի և Քոռնէյլի ստակները, նոցանով Շէքսպիրի նման մի բարբարոս ծաղրածուի ճակատը ստակելու համար» *):

Մինչև անգամ Փոլի՝ իւր հայրենակիցը, կը բամբասէր նորան Գէորգ բ. Թագաւորի առաջ ասելով, թէ «Շէքսպիր մի ջորի է, մերկ, առանց որևէ բռնի, և լսելով զմայլվում է իւր բոժոժների հնչիւնները»:

Անշուշտ կարելի է գուշակել թէ որքան

*) Մի ուրիշ անգամ էլ ծաղրելով ասում է. «Համէթ խենթ է երկրորդ գործ. մէջ. իսկ իւր սիրուհին՝ երրորդում: Օֆելիայի հօրը սպանում է՝ «մուկ է» ասելով: Օֆելիան ջուրն է նետվում, եւ բռնի վրայ թաղում են: Համէթ յիմար կատակաբանութիւններ է անում դերեզմանափորերի հետ. վերջապէս Համէթ, նորա մայրը եւ հօրեղբայրը պատրաստվում են դինի խմել վերջի գործողութեան մէջ, եւ յանկարծ կռուելով խողխողում, սպանում, յօշոտում են միմեանց»:

Շէքսպիր տաքնապ և վիշա է կրած. մէկ կողմից
հարուած, որի պատճառաւ ցաւը չէր կարող շատ
անգամ մեղմացնել իւր բարեկամաց գգուանքն ու
սէրը: Իւր ժամանակակից մատենագիրներն տը-
ւած հալածանքը, աւելացրէք դորա վրայ իւր
ամուսնական տնային կեանքի մէջ կրած տառա-
պանքները, կողակցին՝ Աննայի, թէպէտ բարի,
բայց նախանձոտ բնաւորութեանը պատճառաւ:
Բացի իւր առտնին վշտերից և մատենագրական
ասպարէզին մէջ թշնամի մատենագրաց անխիղճ
վարմունքիցը ուրիշ մի բան իւր սիրտը չէր կարող
վշտացնել. որովհետեւ՝ ինչպէս վերն ասացինք,
Շէքսպիր շատ մարդասէր և բարի լինելով, չէր
կարող՝ իբրև մարդկային ընկերութեան անդամ,
մի որեւէ թշնամի ունենալ: Գրագէտ Գէորգ
Չալիմանը, որ իրեն ժամանակակից լինելով, թարգ-
մանաձ է նոյնպէս Հոմերի Իլիականը, գրում է
Շէքսպիրի մասին, թէ «Այս մարդը իւր համեստու-
թեամբը և պարզասէր վարքովը, կրօնասիրու-
թեամբն ու սակաւատէտ կեանքով ինձ դարմանք
պատճառեց, որովհետեւ այդ յատկութիւնները շատ
հազուադէպ են քերթողաց մէջ»:

Նոյնպէս և նոր հեղինակներից մի քանիսը,
հաստատում են այդ, ի միջև այլոց Մէդլէր և
Լամբրոզո: Այս վերջինը իւր Իտալերէնից Ռուսե-
րէնի թարգմանուած ГЕНІАЛЬНОСТЬ И ПОМЪЩА-
ТЕЛЬСТВО անուն գրքի մէջ, երևելի մարդկանց

մասին խօսելիս՝ գովում է Շէքսպլերին և յարում է նոյնպէս թէ նա Սոկրատի, Գանթէի, Բայրընի, Պուշկինի, և Մառոցլոյի նման ամենադժբախտ մարդն էր ամուսնական կեանքի մէջ:

Ձի գիտցուիւր որոշ թէ ինչ էր այդ տարաբախտ նախանձի սկզբնապատճառը. պատմութիւնը շատ անհաստատ տեղեկութիւն է տալիս այդ մասին: Թէև Շէքսպլերի սիրած լինելը յայտնի է լինում իւր երկու հարիւր քառասունի չափ փոքրիկ նուազներկցը, որոնց բոլորն էլ նուիրուած են մի կընոջ. բայց ո՞վ էր այդ կինը, ինչ կերպ էր նորա վերաբերութիւնը այդ կնոջ հետ. այդ մասին որոշ ոչինչ չէ կարելի ասել. միայն քիչ շատ տեղեակ լինելով Շէքսպլերի անձնաւորութեանը և նորա հոգեկան տրամադրութեանց՝ կարող ենք ենթադրել, թէ այդ սէրը գաղափարական էր, որովհետև այդ կերպ մարդկանց մէջ հոգեկանը աւելի ուժեղ է մարմնականից, և նորա նման աստուածացեալ քերթողին կարծեմ ներելի է ունենալ իւր խանդը բորբոքող սիրելի Մուսան, և երևի Շէքսպլեր շատ է օգտուել նորանից, այդ պատճառաւ գուցէ շատ էլ գովում է կանանց:

Ահա թէ ինչ է ասում նոցա մասին իւր նուազներկց մէկի մէջ, որ գաղղիներէնի է թարգմանած Ֆրանսուա Հիւգօ:

«Կանայք են, որ բղխում են Պրոմէթեան կըրակի կայծերը.—կանայք բոլորը գրքեր են.—ու-

րուեստք և Համալսարաններ են.—նոքա են բոլոր մարդկութեան սնուցանողները և դաստիարակելով ազնուացնողները.— առանց կնոջ ոչ ոք չէ կարող կատարելագործուել, յիմար են նոքա, որք հըրաժարվում են կանանցից»:

Այս տողերն ուղղուած են իւր բարեկամ Սուլթամբթօնին Միստրէս Վառնոնի նկատմամբ, որի վրայ բուռն սիրահարուած էր Սուլթամբթօն, և որին Եղիսաբէթ թագուհին արգելած էր ամուսնանալ, որովհետև ինքը թագուհին էլ չէր կամեցել և չէր կարողացել երբէք ամուսնանալ և դորանով աւելի աչառապէս էր վերաբերվում այլոց կուսակրօնութեանը:

Այսու հանդերձ բոլոր այս պատճառաբանութիւնները չէին կարող մեղմացնել Շէքսպիրի կողակցին՝ Աննայի նախանձը, և վերջապէս կեանքը այնքան դառնացաւ Շէքսպիրի համար որ իւր նուագներից մէկի մէջ հոգւոց հանելով աղաղակում է. «Բոլորից ձանձրացած բարձրաձայն օգնութեան եմ դոչում հանգստաբեր մահը, որովհետև զգուեցայ տեսնելով մուրացկանութեան մէջ ծնուած արժանաւոր մարդիկը, և կողոպտեալ քաղցածը՝ որ խեղկատակ է ձևանում. ամենամաքուր հաւատքը ցաւագին կերպով եղծուած. պատիւը ամօթալից կերպով բաժանուած՝ և կուսական առաքինութիւնը կոպտաբար պղծուած, և արդարութեան արժանաւորութիւնը ի գնւր ոտնակոխ

եղած և կաղ բռնութեան տակ գորութիւնը ան-
դամալոյժ դարձած, արուեստը բռնաբարապէս
կաշկանդուած՝ և թեթևամիտ տգիտութիւնը տա-
ղանդ ձևացած. և գերի դարձած բարութիւնը՝ չա-
րութեան տնօրէնութեան ներքև»:

Անշուշտ նկատեցիք որ այս խօսքերը որքան
նմանութիւն ունին «Լինել թէ չլինել» նշանաւոր
մենախօսութեան հետ:

Իւր հոգւոյն դառնութիւնները և կենացը տա-
ռապալից պատկերը միշտ անդրադառնում են իւր
բոլոր գործերում՝ մանաւանդ Համլէթ ողբերգու-
թեան մէջ:

Նորա միակ մխիթարութիւնն էր հեռանալ
երբեմն մայրաքաղաքից, ուր զբաղմունք և վշտեր
կաշկանդում էին, փախուստ կուտար այնտեղից որ
գայ տեսնէ իւր սիրելի Սթրաթֆօրթը և 1616-ին
մեռնելուց միքանի վայրկեան առաջ խնդրեց որ
այնտեղ էլ թաղուի. և իւր աջ և ձախ կողմերը
թաղուեցան կինը և աղջիկը, մէկը լատիններէն և
միւսը անգլիներէն տապանագրութեամբ. իսկ Շէքս-
պիրի մոխիրները ծածկող քարի վրայ քանդա-
կուած նշմարվում են այս խօսքերը. «Բարի բարե-
կամ, ի սէրն Յիսուսի, մի խառնիր այստեղ թա-
ղուած նշխարներս. օրհնեալ լինի նա, որ սլատիւ
կուտայ այս քարանց, և անիծեալ նա, որ կըլըր-
դովէ իմ ոսկերաց հանգիստը»:

Շատ երևելի անձինք, գաղտնի թաքնուելով

Սթրաթֆօրթի եկեղեցւոյն մէջ ուզեցին ծածկա-
բար բանալ նորա գերեզմանը, որպէսզի գոնէ մէկ
անգամ դիպչեն նորա ոսկերաց, կարողանան չա-
փել և քննել այն գանկը, որ ժամանակաւ բա-
ւոյն, գեղեցկին և ճշմարտին՝ հանճարն ու ջահը
պատսպարել էր իրեն մէջ:

Բայց տապանագիրը կարդալով, չհամարձա-
կեցան այդ անել, և բաւականացան միայն զմայ-
լել՝ կարդալով նորա գործերը, մանաւանդ Համ-
լէթը, որոյ մասին սիտի խօսեմ այժմ, պատմե-
լով նախ Սաքսօ Գրամաթիկուսի առասպելական
պատմութիւնը, որից քաղել է Շէքսպիր Համլէթի
ողբերգութեան նիւթը:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ



Ինչպէս որ վերն ասացի, Համլէթի արկածոց պատմութիւնը գրուած է նախ լատիններէն լեզուով Գանեմարքացի գիտնական Սաքսօ Գրամաթիկոսից և որը Բէլլըֆօրէ Գաղղիներէնի թարգմանեց: Ահա այս աւանդական պատմութիւնից քաղեց Շէքսպիր իւր ողբերգութեան նիւթը, որնոր աւելորդ չեմ համարում այժմ հաղորդել ընթերցողացս, համառօտելով միքիչ այն տեղերը, որք այնքան պիտանի չեն նպատակին:

«Բորիկ, Գանեմարքայի թագաւորը, իւր թըշնամիներին յաղթելուց յետոյ, Նութլանդիայի թագաւորութիւնը յանձնեց երկու քաջ ասպետների— Ժէրվանտիլի որդւոցը, որոց առաջինի անունն էր Հօրվանտիլ և երկրորդինը Ֆէնկօն:

Հօրվանտիլ մեծ հռչակ ունէր ծովային յելուդակի և փրփրայօղ կռիւնների մէջ:

Քուլէր, Նորվէգիայի թագաւորը, վրդվլում էր, լսելով նորա սխրագործութիւնները, որք գերազանցում էին իրեններէց: Ուստի Քուլէր վճռեց ծովամարտի հրաւիրել Հօրվանտիլին, պայման դնելով որ յաղթողը պիտի գրաւէ յաղթեալի բոլոր իշխանութիւնն ու հարստութիւնը. և Հօրվանտիլ յաղ-

Թեց Նորվիչգիայի Թագաւորին. բոլոր Թագաւորական Հարստութիւնը աւար առնելով վերադարձաւ Բորիկ Թագաւորի մօտ և այդ աւարները նորան ընծայեց: Բորիկ ուրախանալով նորա անձնուիրութիւնից կնուծեան տուաւ նորան իւր դուստրըն ժէրիւթ և որոց սիրոյ պտուղը եղաւ մի որդի, որին անուանեցին Ամլէթ:

Փէնկօն, Հօրվանտիլի եղբայրը նախանձից և փառասիրութիւնից կուրացեալ, ինքը նահանգին տէր լինելու համար և կամ չզրկուելու համար իրեն պատկանեալ տէրութիւնից, որոշեց սպանել իւր եղբօրը:

Այսպէսով, Փէնկօն արբանեակներ գտաւ և խորամանկութեամբ ու նենգութեամբ սպանեց նորան, նախապէս անպատուելով այն կնոջ, որ իւր եղբօրն էր և իւր հարսը միանգամայն, և զրաւեց գահը. և երբ հարցուցին, թէ «ինչո՞ւ սպանեց Հօրվանտիլին», Փէնկօն պատասխանելով ասաց. «Ես ուզեցի պաշտպանել կնոջը՝ ժէրիւթին, որ իւր հեզ, հլու և խաղաղ բնաւորութեամբը արժանացել էր իւր ամուսնու ատելութեանը միայն, և ես սպանեցի եղբօրս, որպէսզի ազատեմ այդ անմեղը»:

Այս բոլորին վկայ էր Ամլէթ և իրեն կասկածաւոր ցոյց չտալու համար, սկսաւ խելակորոյս և տխմար ձևանալ: Ամեն օր կըտեսնէին նորան գետնի վրայ գարշահոտ կեղտոտութեանց

մէջ թաւալելը, երեսը ցեխով ծածկուած և բոլոր
իւր անձը այնպէս այլաչլուած, որ չէր կարելի
կարծել թէ մարդ է նա, այլ մի հրէշ: Երբեմն
ծալապատիկ կընստէր վառարանի մօտ, ձեռքե-
րը մոխրին մէջ, երբեմն էլ փայտի կտորները
սուր կըտաշէր և այրելով կըսնդացնէր նոցա
ծայրերը *):

Երբ նորան կը հարցնէին այդ բոլորի պատ-
ճառը, կը պատասխանէր, թէ «Սուրբեր է պատ-
րաստում իւր հօր մահուան վրէժն առնելու հա-
մար»:

Այս պատասխանը ծիծաղով և արհամարհա-
նօք կընդունէին. բայց նա այդ բոլոր փայտերը
խնամքով կը պահէր, որոնք վերջապէս կը տես-
նէք որ պիտի ծառայէին մի օր իւր նպատա-
կին: Մեքանի պալատականներ կը կասկածէին,

*) Ահա այս փայտերը տաշելու տեղեկութիւնս եմ
վերցրել «լինել թէ չլինել» մենախօսութեան մէջ ձեռքս
մի դաշոյն բռնած՝ բեմ դուրս գալս, որ շատերին անհաս-
կանալի է թուած: Տրամաբանելով այսպէս՝ թէ Համլէթ
անշուշտ այդ փայտի կտորտանքը, մի դանակով, կամ դա-
շոյնով կը տաշէր, եւ այն Շէքսպիրի նկարագրած Համլէթը,
որի համար կեանքը անտանելի մի բեռ եղած է. եւ քանի
որ «լինել թէ չլինել» մենախօսութեան միտքը յայտնի
անձնասպանութեան մի ցանկութիւն է արտայայտում, ու-
րեմն բնական չէ միթէ, որ այդ անձնասպանութիւնը իւր

Թէ այդ բոլորը խորամանկութիւն է և նորան փորձելու համար այս միջոցը խորհեցան.

Նորան հանդիպցնել մի հագուազիւտ գեղեցիկ կնոջ, որ կարողանայ բորբոքելով գրգռել Համբլիթի ցանկական տուփանքը:

Եթէ բնութեան քարշողութիւնը կարողացաւ ազդել և նա փութաց յագեցնել իւր տուփանքը, նշանակում է որ նա խելագար չէ: Ուստի հրամայեցին նախ որ ձիու վրայ նստի, բայց նա նստեց ծուռ, ձիու պոչը իբրև սանձ ձեռքն առնելով:

Բայց Ամլիթի կաթնեղբայրը, որ Հօրացիոն է ողբերգութեան, զգուշացրեց նորան. նա էլ կնոջ մի առանձին տեղ տանելով վայելեց նորա գրկախառնութիւնը, վստահ լինելով նորա խոստմունքին որ ոչ ոքի չպիտի յայտնէ իրենց սէրը:

Այդ կիներ ողբերգութեան Օֆէլիան է:

այն դրութեան մէջ մանաւանդ, մի դաշոյնի տեսքը յիշեցնէ նորան աւելի զօրաւոր կերպիւ, միով բանիւ մահ, սպանութիւն եւ անձնասպանիւթիւն. գործողութիւնք, որ դաշոյնով կամ դանակով աւելի կարող են կատարուել: Ինչպէս որ յիշողութեան հաստատ եւ բնական օրէնքով մի բաժակի երեւոյթը յիշեցնում է որեւէ հեղուկ՝ ջուր կամ գինի, փուռը հաց, զիրքը տառ, ամպն անձրեւ, ծնունդը սև, դագաղը դիակ եւ այլն, սպանութիւնն էլ կը յիշեցնէ մեզ հարուած կամ զէնք ընդհանրապէս, որով Համլէթն էլ՝ ինչպէս ասում է, կը ցանկայ «այդ բոլորից մի հարուածով ազատուել»,

Երբ հարցուցին իրեն, թէ—հասա՞ն իւր նպատակին՝ նա այո՛, պատասխանեց, իսկ կինը՝ ո՛չ, և աւելի վերջնոյն հաւատացին: Ամէլէթ ասու՞մ էր որ նա հանգչել է մի ահագին անասունի հողաթափին, աքաղաղի կատարին, և մի տանիքի վրայ: Եւ յերաւի կնոջ հետ ճանապարհին գնացած ժամանակը, հաւաքել էր այդ առարկաների կտորները, ստախօս չլինելու համար: Եւ իւր բարեկամի զգուշացնելու համար գործածած միջոցը յիշելով, բացարձակ և լրբաբար պատմու՞մ էր որ մի թռչուն է տեսել ետեւիցը մի յարդի շիւղ բարձած՝ և քամակին մի փայտ որ արագ իջնու՞մ էր: Բոլորեքեանք ծիծաղեցան այս խօսքին: Սակայն Ֆէնկօն հասկանալով որ այդ միջոցներով չպիտի կարողանայ ճշ-

եւ այն ձեռքի բռնած դաշոյնի հարուածովը: Համէթի այդ դաշոյնով բեմ դուրս գալը, իմ կարծեօք, միտք ունի եւ դեղագիտական է. մինչ իսկ համոզուած եմ որ այդ առարկան մի մեծ կապ ունի «լինել թէ չլինել» մենախօսութեան մէջ գտնուած մտքին՝ եւ Համէթի հոգեկան վիճակին եւ դրութեանը հետ: Եւ խոնարհաբար խորհուրդ կըրտամ նոցա, որք պակասաւոր են կարծել այդ բանը, ուշադրութեամբ կարդալ Սաքսօ Գրամաթիկուսի՝ կամ Բէլլըֆօրէի առասպելը, եւ չդատած տեղեակ լինել այն պայմաններին, որ մի ողբերգու պէտք է իւր աչքի առաջ ունենայ՝ մի այնպիսի տիպար ստեղծած ատեն:

մարտութիւնը երևան հանել, ուրիշ մի բան խորհուրդ տուաւ նորան իւր խորհրդականը, որ ողբերգութեան Պոլոնիոսն է կամ ֆօռամպիսը:

Յորդորեց Ֆէնիօնին բացակայ լինել միքանի ժամանակ կարևոր գործերի պատրուակաւ և Ամլէթը փակել իւր մօր հետ մի սենեակի մէջ, ու ինքը խորհրդականն էլ յանձն առաւ նոցանից գաղտնի այնտեղ թաք կենալ և լրտեսել: Այս գաղափարը շատ գոհացուցիչ թուեց Ֆէնիօնին: Բայց Ամլէթ այս անգամ ևս կարողացաւ ազատել իւր անձը խորամանկութեամբ, վասնզի կասկածելով որ այնտեղ մէկը պահուած լսում է, սկսեց թևերը շարժելով աքաղաղի պէս գոչել և անկողնին վրայ բարձրանալով պար գալ, և ձեռքերովը փրճորեց ու գտաւ մի մարդու մարմին և նորան թաքստից դուրս քաշելն ու սպանելը մէկ արաւ. յետոյ մարմինը կտոր կտոր ջարդելով խաշեց ու խողերին կերակրեց, ապա կրկին վերադառնալով մօրը մօտ սկսաւ յանդիմանել նորան. «Ինչո՞ւ համար, ասաց, կեղծ ողբերով ուզում ես ծածկել քու ոճիրդ. դու, որ ընդունեցիր պոռնիկ կանանց նման եղերական և զարհուրելի ամուսնութեան հանգոյցը, սեռապիղծ եռանդեամբ համբուրելով ամուսնոյդ մարդասպանը. դու, որ ամօթալից գգուանքներով փայտայում ես նորան, որ զաւակիդ հօրը խեղդեց. անասունք միայն կարող են այսպէս միանալ... և դեռ շատ բաներ. յետոյ

շարունակեց՝ «ի գուր չէ որ ես խելագար եմ ձե-
ւանում. որովհետև նա՛ որ կարողացաւ իւր եղբո-
րը սպանել, չէ՞ կարող միթէ սպանել նորա որ-
դուն. բայց իմ հօր վրէժը առնելու եռանդը կեն-
դանի է սրտումս, սակայն շատ նրբութիւն է հար-
կաւոր. գալով քեզի չի պատկանիլ որ ողբաս իմ
չիմարութիւնս, քանի որ պարտական ես արտա-
սուել քո սեպհական յանցանքը»:

Ամլէթ պատուելով իւր մօր սիրտը, լաւ և
առաքինական զգացմունքներ հանեց նորա միջից,
սովորեցուց նորան իւր նախկին սիրոյ չիշատակ-
ները նախամեծար համարել ներկայիս տուփանաց:

Ֆէնկօն վերադառնալով, շատ որոնեց իւր
խորհրդականին, բայց Ամլէթ նորան պատասխա-
նեց, որ հարբած լինելով աղբանոցի մէջ ընկել
մեռել է և թէ խոզերը նորան լալիել են: Այս
պատասխանը չէր կարող վստահացնել Ֆէնկօնին,
որ կասկածոտ նայելով իւր եղբորորդուն վրայ ու-
զում էր անյայտացնել նորան, և որին սպանել տալու
համար Բրիտանիայի թագաւորիցը ուզեց օգտուել:

Անգղիա գնացած ժամանակ Ամլէթ խընդ-
րեց իւր մօրիցը որ խնջոյքի սրահի պատերը ծածկէ
ամուր և պինդ կտաւներով, որպէսզի մի տարուց
յետոյ այնտեղ կատարեն իւր թաղման հացկերոյ-
թը, և ինքը խոստացաւ ճիշդ այն ատեն վերադառ-
նալ: Նորան ընկերակցում էին Ֆէնկօնի թիկնա-
պահները երկու անձինք, որոնք ըստ ժամանակի

սովորութեան մի տախտակի վրայ փորուած նամակ էին տանուս, որով հրամայուս էր Ֆէնիօն սպանել Ամլէթին:

Իսկ Ամլէթ իւր ընկերներէ քուն եղած ատեն փոխեց հրամանագիրը, հրամայելով որ նոցա գլխատեն. և Ֆէնիօնի կողմից էլ աւելացուց որ թագաւորը իւր աղջիկն Ամլէթին տայ:

Բրիտանիայի թագաւորը շատ սիրով ընդունեց նորան և շատ յափշտակուեցաւ Ամլէթի խելքից. նա այնտեղ զանազան գուշակութիւններ և խելացի դիտողութիւններ անելով ու զանազան բաների մասին շուրջ դատողութիւններ տալով, և իւր գուարթութեամբ այնքան գրաւեց թագաւորի սէրն ու յարգանքը, որ վերջապէս աղջիկը կնութեան սլարգև առաւ արքայից: Հետեւեալ օրը նորա երկու ընկերները կախել տուեց, Ամլէթին էլ մի ահագին դէզ ոսկի շնորհելով, որնոր Ամլէթ հալեցուց և երկու գատարի գաւազաններէ մէջ լեցնելով՝ Դանեմարքա վերադարձաւ:

Դարձեալ իւր առջի կեղտոտ շորերը և յիմարի դերը առնելով, հէնց իսկ այն երեկոյին հասաւ և մտաւ սրահը, ուր իւր թաղման հացկերոյթն էին անուս:

Բոլորը սարսափած ամիբերան մնացին, երբ տեսան որ կենդանի է: Աւ երբ հարցուցին, թէ ուր են իւր ընկերները, ոսկւով լիքն երկու գաւազանները ցոյց տալով ասաց. «Ահա մինը և ահա միւր»:

սը: Այն ժամանակ սարսափը ծիծաղի փոխար-
կուեցաւ, մինչդեռ ինքն Ամլէթ աւելի յուզում էր
կոչնականաց ուրախութիւնը՝ երգելով և անձամբ
գինի մատուակելով նորանց:

Բոլորն էլ գինուց յաղթուած, երբ սկսան
քնել, յանկարծ պատի կտաւները վար իջեցնելով
նոցա վրայ ծածկեց. և կտաւներէ եղերքը միմեանց
կապելով կաշկանդեց այն փայտերով, որ մի ժա-
մանակ սրած և պատրաստած էր կրակարանի
մօտ, և պալատին կրակ տուեց. և երբ նոքա բո-
լորն էլ այրուելով փլատասկներէ և մոխրի տակ
թաղվում էին, Ամլէթ ուղիղ հօրեղբօրը ապա-
րանքը գնաց և իւր սուրը, որ արդէն պատեա-
նին մէջ գամուած և ամրապնդած էր, կախեց
այնտեղ Ֆէնիօնի մօտ՝ և փոխարէն նորա սուրը
ինքն առաւ, յետոյ Ֆէնիօնին՝ որ քնած էր, դար-
թեցուց: Ֆէնիօն տեսնելով Ամլէթի սպառնալից
պատկերը և սուրը ձեռին, յարձակուելով առաւ
պատից այն սուրը՝ իրենը կարծելով, և երբ նա
ճգնում էր հանել պատեանից, Ամլէթ պատեհ
առիթ առնելով ահագին և ուժեղ մի հարուած
իջեցուց շնքին և գետին թաւալեց գլուխը: Ֆէն-
իօնի մահը բաւականին վրդովեց ժողովրդեան,
այդ պատճառով Ամլէթ միքանի օր ոչ ոքի չե-
րևաց. բայց ի վերջոյ, տեսնելով ժողովրդեան
տխուր և խաղաղ դերքը, բոլորին էլ մի հրապա-
րակի վրայ հաւաքեց և այնպիսի մի ճառ ասաց, որ

ամենի սիրտն յուզուեցաւ և շատերն արտասուեցին և միաբերան Դանեմարքայի Թագաւոր անուանեցին նորան.....:

Ահա այստեղ է վերջանում Բէլլեֆօրէի սլաւմութիւնը և նոյնպէս Համլէթի ողբերգութեան նիւթը. բայց շատ հետաքրքրելի է լսել Ամլէթի կենաց յետագայ հանգամանքները, որոց մասին գրած է միայն Սաքսօ Գրամաթիկոս, որնոր Թարգմանած է գաղղերէնի Աղէքսանդր Բիւլինէր և տպուած իւր «Համլէթ Դանեմարքացեն» անուն գրքի մէջ Փարիզում 1878-ին: Եւ ահա շարունակում է այսպէս.

«Ամլէթ Դանեմարքայում վերջ տալով իւր քաջագործութիւններին, երեք նաւեր հարուստ սլաշարներով բեռնաւորած և ընտիր քաջամարտ հետևակներով գնաց Բրիտանիա. և ինքն էլ, որ առաջ սաստիկ աղքատ և գժուճ էր հագնուած, յետոյ ընդհակառակն հարուստ և ճոխ զգեստներով և փարթամութեամբ վարդարուեց և իւր վահանին վրայ նկարել տուաւ՝ բոլոր մինչև այն ատենը իւր կենաց մէջ սլատահած արկածները մանրամասն կերպով, որոց վրայ քիչ առաջ խօսեցանք:

Բրիտանիայի Թագաւորը ընդունեց նորան սերժութեամբ և շքեղ կերպիւ, և երբ խնճոյքի ժամանակ հարցուց Ամլէթին, թէ Ֆէնկօն կենդանի է, Համլէթ սլատասխանեց որ նա մեռաւ սրով: Թագաւորը հարցափորձելով, իմացաւ վեր-

Չապէս, որ Ամլէթն է Ֆէնիօնի մահուան հեղինակը:

Նև այս լսելով սարսափեցաւ, որովհետև մի ժամանակ երդուած էր Ֆէնիօնին նորա մահուան վրէժն առնել:

Իրենց մէջ դաշինք էին դրել որ երկուսից որնոր կենդանի մնայ, միւսի մահուան վրէժն առնէ: Այսպէսով թագաւորը զգում էր իրեն երկու սուրերի մէջ, մի կողմից աղջիկն ու փեսան, միւս կողմից բարեկամին տուած ուխտն ու խոստումը, որին չէր կարող դժգոյս: Նև խոստումը չաղթեց ճնողական պարտուց:

Սակայն այդ վճռին կատարումը հիւրասիրութեան սուրբ դաշինքների դէմ ոճիր համարելով, լաւագոյն համարեց իւր վրէժխնդրութեան գործիք անել մի օտար ձեռք. ուստի չանձնեց Ամլէթին գնալ իբրև պատգամաւոր իւր կողմից Սիովդիայի չքնաղագեղ թագուհւոյն, որի հետ կը ցանկար թագաւորը իբրթէ ամուսնանալ, գուցէ առանց Ամլէթի միջնորդութեան չկարողանար չաջողցնել այդ, որովհետև մինչև այն ատեն մերժել էր բոլոր իրեն ներկայացող վիեսացուներին, ոչ թէ չհաւանելով ամօթխածութեամբ, այլ գոռոզ և սեգ լինելով, ատում էր բոլորը, այնպէս որ իրեն կնութեան ուզողներին շատ անգամ սպանել կուտար:

Ամլէթ չանձն առաւ այս վտանգաւոր պատ-

գամաւորութիւնը, մասամբ էլ թագաւորի իրեն տուած հետեւակիներն իրայ լստահանալով:

Սկիզբիս հասնելով՝ գնաց Արքունիքից քիչ հեռու մի մարգագետին գտաւ, ուր ձկերին հանգիստ տալու համար հանգչեցան բոլորը, և Ամլէթ իւր շուրջը սահապաններ կանգնեցնելով քրնեց մի կարկաչող աղբիւրի մօտ:

Թագուհին իմանալով նորա գալուստը, տասը երիտասարդ լրտեսներ ուղարկեց իմանալու համար, թէ ո՞վ է այն օտարականը:

Գոցանից մինը, աւելի ճարպիկ լինելով, խաբեց սահապաններին և այնպիսի գզուշուրթեամբ վեր առաւ քնացող Ամլէթի գլխի տակից այն վահանը, ուր ամբողջ իւր կեանքն էր նկարուած, որ Ամլէթ չգարթեց քնից և ոչ իւր հետեւակները, և լրտեսը տարաւ ներկայացրուց վահանը իւր Տիրուհուն, Բրիտանիայի թագաւորի նամակին հետ՝ որ նոյնպէս ճարպիկութեամբ գողացել էր:

Թագուհին գննելով վահանը ու կարդալով նամակը՝ իմացաւ որ շուտով պիտի տեսնէ իւր առաջ այն դիւցազնը, որ ճարտար իմաստութեամբ իւր հօր սպանութեան վրէժն է առած: Եւ մի ծերունու հետ ամուսնանալու գաղափարից գզուած, աւերեց նամակը և նորա տեղ գրեց մի գիր իբր թէ թագաւորի կողմից գրուած և ստորագրուած, որով թագուհուն խնդրում էր կնութեան իւր նամակաբեր Ամլէթին համար, և կրկին հրամայեց

որ նամակն ու վահանը գգուշութեամբ իրենց տեղը վերադարձնեն:

Իսկ Ամլէթ եղած գողութիւնը նկատելով, գիտմամբ քնել ձեացուց, որովհետեւ դեռ ուրիշ խորամանկութիւններ էր ստատում նորանից, որ գողացել էր նամակն ու վահանը. և կասկածը ի գուր չէր: Եւ երբ լրտեսը գալիս էր գողացած բաները իւր տեղը դնելու, յանկարծ վեր ցատքեց տեղիցը և շղթաներով կաշկանդեց նորան. յետոյ իւր ընկերներին զարթեցնելով գնաց Թագուհւոյն ապարանքը և յանուն իւր սպանեալ հօրը՝ Հօրվանտիլի ողջունելով նորան, մատուցց նամակները:

Էրմէթբուդա, այսպէս էր Թագուհւոյ անունը, գովեց Ամլէթի քաջութիւնը քաղցր խօսքերով, և ասաց, թէ Ֆէնկոնը արժանի էր այդ պատժին և Ամլէթ սովորական մահկանացուներից աւելի նուրբ գիտակցութեամբ հասել է իւր նըպատակին ոչ միայն անստգիւտ չաջողութեամբ գլուխ հանելով իւր վրիժառութիւնը մի սեռապիղծ աւագակից, այլ տիրելով նաև իրաւացի վրաստերով նորա տէրութեանը, որ բիւրաւոր որոգայթներ էր լարած իրեն դէմ: Եւ նա զարմանում էր, որ մի այդպիսի տաղանդի տէր մարդը թնչպէս էր համաձայնել ամուսնանալ անարգ և անտոհմ անձի հետ, երբ ինքը ծագում էր ամենաբարձր ազգատոհմից, մինչդեռ նորա կողակիցը, որին թէպէտ բախտը պատուել է Թագաւո-

րական պատիւներով, բայց և այնպէս ճնուած էր ստրուկներէց:

Եւ թէ «խոհական և իմաստուն մարդը չպէտք է ուշ դարձնէ ամուսնութեան մէջ արտաքին փայլին և գեղեցկութեան, այլ երբ ընտրում է իրեն ամուսին, ուշի ուշով պիտի փնտրէ նաև նորա ազնուատոհմ ծագումը, առանց գերի լինելու գեղեցկութեան հրապույրներին, որոնք զբզուում և յագեցնում են միայն մարդկանց հաճոյքն ու ցանկութիւնը և անյայտանալով ի չիք են դառնում ամենագիւրդին կերպով: Բայց, աւելացրեց նա, կայ նաև մի կին, որին կարող ես դու ընտրել քեզ ամուսին, որի ազնիւ սերունդը հաւասար է քո սերունդին, որը արժանի է քո գգուանացը այնքան իւր բարձր աստիճանովը, որքան և իւր հռչակաւոր արեան ծագումով, որի հաւասարը գուցէ չլինի՝ թէ հարստութեան և թէ թագաւորագարմ ծագումի մէջ»:

Եւ նա յայտնեց որ ինք ևս թագուհի է և արքայազուն, որքան թոյլ էր տալիս նորան իւր վիճակը, և թէ նա ում որ համարէր արժանաւոր մասնակցել իւր անկողնոյն, կըլինէր թագաւոր և կըբարձրանար գահի վրայ:

Որ նորա կողակցութիւնը մի արքայական գաւազան կարժէ և այդպիսի մի նուէր փոքր բան չէ նորա կողմէց, որ սովոր է արհամարհանօք պատասխանել նոցա, որք խնդրում են իւր ձեռքը:

Այս կերպով խրախուսեց նորան, որպէսզի իւր վրայ դարձնէ նորա հաճոյից ցանկութիւնը, և նախամեծար համարելով ազգատոհմն ու գեղեցկութիւնը, ամուսնանայ իրեն հետ:

Այս խօսքերից վերջը ընկաւ նա Ամլէթի գրկաց մէջ, որնոր հրապուրուած գեղեցիկ հոմանոց խօսքերիցը, պատասխանեց նորա փառաքշանքներին, անձնատուր լինելով գրկախառութեանցը և խոստովանեց որ համաձայն է նորա բաղձանացն ու կամքին:

Եւ ապա իսկոյն խնջոյք պատրաստեցին, հրաւիրելով բարեկամներն և ժողովի կոչելով գլխաւորներին, հարսանիքը կատարեցին:

Յետոյ անմիջապէս Ամլէթ իւր ամուսնոյն և Սկոլդիւիացի մի ընտիր գնդով, որք կարող էին պաշտպանել և ազատել իրենց որոգայթներէց, վերադարձաւ Բրիտանիա:

Թագաւորի դուստրը, որի հետ ամուսնացած էր Ամլէթ, ընդառաջ եկաւ և ողբալով Ամլէթի արարմունքը, որ մի սիրուհի նախադաս էր համարել իրեն, ասաց, թէ անիրաւութիւն է իւր նախանձը գրգռելով ոտնակոխ անել տալ իրեն՝ իւր ամուսնական պարտաւորութիւնը, և ցոյց տուաւ որ արդէն իւր գաւազին մէջ գտնուած էր սիրոյ գրաւականը, և միանգամայն հաստատելու համար Ամլէթի վրայ ունեցած համակրութիւնը, ասաց նորան.

«Եթէ Ամլէթ ատեց իւր մօրը գայթա-

կղեցնողին, ես պիտի սիրեմ իմ ամուսնոյս հոման-
ւոյն: Ոչ մի անձկութիւն և ցանկութիւն չպիտի
կարողանան մարել այն եռանդը, որով բոլորքովմ
եմ քեզ համար: Ուստի պէտք է որ յայտ-
նեմ բոլոր այն դարանները, որ լարվում են
քո կենաց դէմ: Ուրեմն զգուշացիւ հօրիցս, ո-
րովհետև քո ճարտարամտութեամբ պատգա-
մասնորութեան արդիւնքը քեզ սեպհականա-
ցրիւ»:

Այսու հանդերձ թագաւորը վրայ հասաւ և
Ամլէթը կուրծքին վրայ սեղմելով, հրաւիրեց
նորան մի խնջոյքի, ծածկելով իւր դիտաւորու-
թիւնը բարեկամական ցոյցերի տակ: Ամլէթ
նոյնպէս սկսաւ կեղծել և զգեստի տակից զրահ
հագնելով և երկու հարիւր ասպետներ հետն առ-
նելով հասաւ խնջոյքին սրահը, նախամեծար հա-
մարելով դիմադրել վտանգը խորամանկութեամբ,
քան թէ ամօթալից կերպով փախչել նորանից.
Երբ նա մօտեցաւ պալատին, թագաւորը ձե-
հեծած յարձակուեցաւ և նիզակովը կըսպա-
նէր նորան, եթէ չունենար զրահ հագուստի
տակից:

Ամլէթ թեթև վերաւորուելով վերադարձաւ
այնտեղ, ուր թողած էր Սկովդիացի երիտասարդ
ազնուականները, և Էրմէթրուդա թագուհւոյն
լրտեսը, որ վահանն էր գողացել, ազատեց գե-
րութիւնից, և իր խորամանկութեանը ներելու

պայմանաւ՝ հրամայեց որ յանձնառու լինի պատգամաւոր գնալ Թագաւորին:

Սակայն Թագաւորը ժամանակ չթողնելով վրայ հասաւ և ջարդեց Ամլէթի բանակի մեծագոյն մասը:

Հետեւեալ օրը ճակատամարտը աւելի դժուար պիտի լինէր. Ամլէթ յոյս չունէր որ կարողանայ դիմադրել, ուստի մտածեց աւելացնել իւր դօրաց թիւը, ոտի վրայ կանգնեցնելով մեռեալները՝ նեցուկ դնելով ցիցեր, ձողեր, միքանիսը մօտակայ ժայռերին Թեք տալով, շատերին էլ ձիերի վրայ սպառազինեալ իբրև Թէ իրօք պատերազմի սլատրաստուած լինէին:

Այս հնարքը յաջողութիւն գտաւ, որովհետեւ այդ քարացեալ դիակները երևոյթը իրենց զրահները մէջ, արեգակին տակ փայլելով, ահագին մի բանակի երևոյթը ունէին: Այսպէսով մեռեալ զինուորները կենդանեաց տեղն էին բռնում, իբրև Թէ բանակից ոչ ոք պակասած չլինէր:

Այս երևոյթից զարհուրած, փոխանակ ճակատամարտի, փախուստի դիմեցին Բրիտանացիք, վախենալով այդ մեռեալ զինուորները երևոյթից, որոնց իրենք իսկ զրկել էին կեանքից:

Թագաւորը փախչել ուզելով, հալածուեցաւ Դանեմարքացիներէց և սպանուեցաւ:

Ամլէթ յաղթական և մեծ աւարով բեռնա-

ւորուած լիբրադարձաւ հայրենիք, Գանեմարքա, իւր երկու ամուսիններէ հետ *):

Այն ժամանակ Բորիկ թագաւորը մեռած էր և նորա տեղ թագաւորում էր Վիլլէթուս, կողոպտելով Ամլէթի մօրը և տանջելով նորան, ասելով թէ Ամլէթ յաւիշտակած էր Եռլանդիայի գահը:

Ամլէթ չափազանց սակաւապետ ձեւանալով, իւր աւարի մեծ մասը Վիլլէթուսին ընծայեց. կարծես այդ պարգևից Վիլլէթուսի ոխը մեղմացաւ, սակայն այդ ժամանակաւոր էր, որովհետև կատաղաբար յարձակուեց Ամլէթի դէմ, վրէժ առնելու պատրուակաւ. և իւր թշնամութիւնը, որ մինչև այն ատեն ծածուկ մնացել էր, հրասպարակ ելաւ, և յաղթեց Ամլէթին: Կրկին անգամ Վիլլէթուս պատերազմի հրաւիրեց նորան, իսկ նա սկսեց տատամսիլ: Պէտք էր փախչել ամօթով, թէ ոչ արհամարհել վտանգը. որովհետև գիտէր որ կեանքը վտանգի պիտի են-

*) Այստեղ Բիւլսնէր նկատում է ասելով, թէ արդեօք այս զրահաւորեալ բանակի նկարագրութիւնիցը չէ՞ կարելի հետեւցնել, թէ այնտեղից Շէքսպիր քաղած լինի իւր զրահաւոր ուրուականի երեւոյթը, Համլէթի հօր պատկերի տակ: Մինչ արդ նորա մասին ոչ մի բացատրութիւն տրուած չէր, այն պատճառաւ որ Բէլլըֆօրէի առասպելն է միայն ծանօթ շատերին. եւ դորանում չի կայ այդ մեռելոց բանակի անցքը, այլ լոկ Սաքսօ Գրամաթիկուսի պատմածին մէջ:

Թարկէր դիմադրելով, կամ փախստականի նման նախատանաց ենթարկուէր՝ եթէ փախչել ուզենար. երկար մտածելուց յետոյ, պատիւն և փառասիրութիւնը յաղթեցին, որովհետև նախամեծար կըհամարէր փառաւոր քաջի մահը՝ աննշան և ամօթալի կեանքին. մանաւանդ այնքան սիրում էր իւր կնոջ Էրմէթրուդային որ նորան որբ-կայրի թողնելու մտածութիւնը իւր սեսչական մահիցն աւելի մտատանջութիւն էր պատճառում իրեն, մինչև անգամ պատերազմը չսկսած, նախապէս ուզեց մի նոր ամուսին գտնել իւր որբ-կայրի մնալու կնոջը. բայց Էրմէթրուդա վեհանձնաբար խոստացաւ հետևել իրեն մինչև պատերազմի դաշտը և բացարձակապէս ասաց նոյնպէս, թէ «ատելի է այն կինը, որ չէ կամենում մասնակցել իւր ամուսնոյն կենացը սպառնացող վտանգին»:

Բայց նա իւր գերագոյն խոստմանցը հաւատարիմ չմնաց, վասնզի Ամլէթ յաղթուած և սպանուած լինելով Վիկլէթուսից, Էրմէթրուդա նորա սիրուհին և աւարը եղաւ:

Ահա այսպէս բախտի բերմունքը ջնջում է կանանց խոստումները. ժամանակիս ընթացքը և ճակատագրին հարուածները կըփոխեն կանանց հոգւոյն հաւատքն ու վստահութիւնը, որ աւելի սիրոյ և տուփանաց են ենթակայ: Որքան կինը սիրէ խոստումներ անել, նոյնքան տրամադիր է չկատարել նոցա. բարեկեցիկ վիճակի գանազան հան-

գամանքները կըզբաւեն նորան և նա միայն
կըփնտրէ նորութիւն՝ մոռանալով անցեալը: Դա-
տարի և զուրի լինելով խորհրդածութիւնից՝ իւր
ախորժակները միայն յագեցնել կըփութայ:

Ահա այս եղաւ Ամլէթի կենաց վախճանը, որ
կարող էր աստուածոց հաւասար փառք ունենալ և
մթագնել Հէրքուլէսի քաջութիւնները, եթէ բախ-
տը իւր հանճարին հետ միացած, հաւասար կեր-
պով նսլաստէին իրեն:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Մ Ա Ս Ն Ե Ր Ր Ո Ր Գ



Առապելի եւ ողբերգութեան մէջ եղած զանազանութիւնը:— Գէօթէյի կարծիքը:— Քննադատք:— Խրատական առած:— Ի՞նչպէս պէտք է վարուել Շէքսպիրի հետ:— Զանազան հեղինակաց Համլէթները:— Շէքսպիրի առաջին եւ երկրորդ Համլէթը:— Նոյա զանազանութիւնը— Թէ՛ սրբան Համլէթի ողբերգութեան նիւթը նմանութիւն ունի Շէքսպիրի ժամանակակից անցքերին եւ Համլէթի բնաւորութիւնը Շէքսպիրի հոգեկան տրամադրութեան հետ:— Աղէքսանդր Մէդլիէր եւ նորա քննադատութիւնը:— Համլէթ մի զաղափարական անձն չէ ողբերգութեան մէջ:— Ի՞նչ տեղեր Համլէթի՝ Շէքսպիրի փոխարէն խօսելը յայտնի է լինում:

Արդէն յայտնի է ձեզ լիովին Շէքսպլրի ողբերգութիւնը. անկասկած ընթերցողացս շատերը քանիցս անգամ տեսած կըլինին նորա ներկայացումը զանազան տեղեր, տարբեր դերասաններէց: Ուստի այժմ կարելի է, յուսամ, վերելվերոյ մի բազմատուութիւն անելով՝ գտնել, թէ ի՞նչ մեծ և ահագին զանազանութիւն կայ Սաքսօ Գրամատիկոսի և Բէլլըֆօրէի նկարագրած առասպելական

Ամլէթուսի և Շէքսպիրի ստեղծած իրական Համլէթին մէջ: Այն, գանազանութիւնը մեծ է:

Այդ խորամանկ, վրէժխնդիր, թէպէտ ուղղաբարոյ բաց իւր նպատակին հասնելու համար ամեն տեսակ շնական և բարոյական կեղտոտութեանց մէջ թաւալող մի յելուզակի աւատական ժառանգ Ամլէթուսը, հակապատկերն է՝ խոհուն, փափուկ, վսեմ, ամենայն հոգեկան ազնիւ ձիրքերով զարդարուած, բարի սրտով, բարի խորամանկութեամբ, խելացի և ընկերասէր, իբրև մարդ տարակուսող և իւր պարտականութեան առաջ սխալուելուց վախենալով, դողդողջուն և տարտամ, բաց միանգամայն գրաւիչ Համլէթին:

Գրամաթիկուսի Ամլէթուսը խորամանկ է և ուժեղ, այլ Շէքսպիրինը շատ խելացի, բաց շատ էլ տկար, մանաւանդ երբ որ վիշտը տիրում է նորան, տկար կազմուածքը շատ տեղ չէ համապատասխանում և չէ լինում նեցուկ իւր ծանր հոգսերին և մտածողութեանցը:

Իբրև մի պարարտ հող դիւրաբեկ ամանի մէջ լքցուած, «որի մէջ, ասում է Գէօթէ, փոխանակ անուշահոտ ծաղիկներին, կաղնի են տնկել որ երբ իւր արմատները տարածուին, ամանը կը խորտակեն»:

Եթէ Համլէթի հրատարակուած օրից ի վեր մինչև այժմ բոլոր մատենագրաց, բանիբուն հետախոյզներին կարծիքները գրել հարկ լինէր, վերջ

չէր ունենար. աւելի գովեցին նորան, քան թէ պարսաւեցին. բայց ընդհանրասէս շատ վիճեցին. սակայն գովեստից և պարսաւանաց մէջ պէտք է գգոյշ լինել, երբ խօսակցութեան նիւթը Շէքսպիրի նման հոգեբան փիլիսոփայ մեծ բանաստեղծն է:

Յիշելով այս հնուց մնացած պատմութիւնը *), թէ «Մի արևելցի թագաւոր երբ գահը բարձրացաւ, արքունիքի բոլոր բանաստեղծները չափազանցօրէն գովեցին նորան՝ իշխանաց ամենալաւն և քաջն անուանելով, որոյ շնորհիւ ոսկի դար պիտի ծագի թագաւորութեան մէջ:

Երբ հանդէսը վերջացաւ, թագաւորը հրամայեց որ բանաստեղծները իրեն առաջ բերեն, որք՝ հակառակ իրենց ակնկալութեան, շատ սառն ընդունուեցան թագաւորից և երբ ուզում էին նորից պողոտախօս գովեստներ շռայլել, թագաւորն իսկոյն ընդմիջեց նոցա ասելով՝ «սացէք տեսնեմ, այդ բոլորին, ինչ որ ասիք իմ նկատմամբ, դուք ինքներդ հաւատում էք. եթէ իրօք համոզմամբ և սրտանց ասացիք, նշանակում է որ դուք խենթեր էք, և որ անկարելին կարելի էք կարծում: Իսկ եթէ այդ ասածներուդ մէջ հաւատք չունիք, ուրեմն դուք վտանգաւոր գրողներ և կատարեալ աղմկիչներ էք: Երբ ժողովուրդը զգայ, որ

*) Բիւխնէր. Համիթ Դանեմարբացին:

ճեր խոստումները չեն իրագործվում, ինձ պատաս-
խանատու պիտի համարի. պիտի ատէ իմ անձը և
պիտի ուրանայ իմ իշխանութիւնը, և այդ բոլորի
պատճառը դուք պիտի լինիք և ձեր շողոքորթ-
բանաստեղծութիւնները. հեռացէք ուրեմն աչքիցս
և այլ ևս մի կրկնէք դոցա»:

Եթէ Շէքսպիր էլ՝ Դրամատիկական արուեստի
թագաւորը, գար և իւր գահը բարձրանար, միթէ
չպիտի ստիպուէր ասել միւլենոյնը բոլոր այդ ան-
չաջողակ շողոքորթներին, որ ճիգ են թափում՝
հարկը տարիներկից ի վեր, աղաւաղել իւր գործը
դանազան անտեղի և տալիարակ կարծիքներով:

Իրօք մի մեծ ծառայութիւն մատուցած չենք
լինիլ անգղիացի մեծ բանաստեղծին՝ ներկայացնե-
լով նորան մի գերբնական հսկայ. այս վարմունքը
կընուագեցնէ իւր ճշմարիտ և արդար արժանաւո-
րութիւնը՝ այլանդակելով և եղծելով իւր երկունքը:

Շէքսպիրի հետ պէտք է վարուել շատ խո-
հեմ, լուրջ և բնական կերպիւ. պէտք է շատ ճա-
նաչել նորան՝ կարենալ գովելու համար. ինչպէս
ինքը իւր գործոց բնակութեանը մէջ մեծ է,
նոյնքան կըմեծանայ նորա արժէքը չափաւոր և
անկեղծ գովեստով այն ամեն անձանց, որոնք ճա-
նաչել և ուսումնասիրել են իւր կեանքը և իւր
գործերը:

Եթէ ես էլ համարձակվում եմ իմ յարգելի
ընթերցողաց ցոյց տալ նորա բոլոր արժանա-

ւորութիւնները, այդ անու՛մ եմ հաւատարիմ աղ-
բիւրներից՝ շատ հմուտ մատենագրաց վկայու-
թեանը և տուած տեղեկութեանց վրայ հիմնուե-
լով, և մի քիչ էլ իմ փորձառութեանը. և թող մե-
ղադրելի չհամարուի, եթէ ես՝ ողբերգուս գրաւուած
նորա հրաշալի գործերիցը, փոխանակ մէկ բառի,
երկուսը գործածեմ նորա գովեստին և դրուա-
տեացը. ուրեմն շարունակեմ:

Շէքսպիրից առաջ Համլէթի նման թատրեր-
գութիւններ եղել և անհետացել են այժմ: Ֆրան-
սուա Հիւգօյի՝ Թովմաս Նասից և Մալօնից բե-
րած վկայութեանցը նայելով, յայտնվում է թէ
Անգղիայում Համլէթից առաջ խաղացվում էր մի
ողբերգութիւն «Սպանիական եղերերգ» կամ Ժէ-
րօնիմօ անունով:

Եւ Մալօն պնդում է, թէ այդ ողբերգութեան
նիւթը բոլորովին նման է Համլէթին և որոյ հե-
ղինակն էր ոչ Շէքսպիր, այլ Թովմաս Գիտ, որ
յետոյ մոռացութեան տրուեցաւ:

Քօլլիէր, Էրվինուս և Թէն քննադատք ասում
են, թէ ժամանակակիցք իրենց լիշատակագրու-
թեանց մէջ լիշում են այս տեսակ մի թատրեր-
գութիւն, որ անշուշտ շարադրուած և խաղացուած
էր Շէքսպիրից շատ առաջ, հաւանականաբար այդ
խաղը հիմնուած էր աւանդութեան տուած տեղե-
կութեանցը վրայ, որ պէտք է տպուած լինի 1587-ին:

Իսկ մեր մեծ բանաստեղծը անկասկած օգ-

տուած կըլինի թէ աւանդութիւնից և թէ այդ նախընթաց ողբերգութիւնից:

Նոյնպէս անգղիացի գրագիտաց՝ Լօճի, Հէնգլօվի և Նասի հաստատելովը յայտնի եղաւ որ կայ մի նախընթաց Համլէթ 1596-ին տպուած, և այդ Թովմաս Քիտինն է: Սակայն շատ կարևոր է դիտնալը որ Շէքսպիր երկու անգամ գրած է Համլէթը՝ գանազան վրոփոխութիւններով. առաջինը սկսել և վերջացրել է քսան և մէկ տարեկան եղած ատեն, իսկ երկրորդ Համլէթը երեսուն և վեց տարուայ հասակում. տասն և հինգ տարի մտածել և սրբագրել է նորան և վերջնական կերպով ի լոյս է ընծայել 1604-ին:

Երկրորդ Համլէթը, նոյնպէս և առաջինը, Քիտից գրականապէս գողացած չէ Շէքսպիր, այլ իւր հանճարեղ մտաց արդիւնքն է, որ մատուցել է գրականութեան: Փրանսուա Հիւգօ ասում է, թէ «Լաւ հասկանալու համար երկրորդ Համլէթը, առաջինին պէտք է տեղեակ լինել»:

Այստեղ անհրաժեշտ հարկաւոր կըլինի հաղորդել ընթերցողացս, թէ ինչ գանազանութիւն է դրել Շէքսպիր իւր առաջին և երկրորդ Համլէթի մէջ, որ այն ժամանակից ի վեր ամեն տեղ տրպուած, ամեն լեզուների թարգմանուած և ներկայացուած է:

Նախ և առաջ՝ առաջին Համլէթի մէջ գործող անձանց անունները միևնոյնը չեն:

Փոխանակ Կլօդիուսի միայն կուչուս է թագաւոր Գանեսմարքայի. Լաէրաը՝ Լէարդ. Պոլոնիուսի փոխարէն՝ Քոուսմպիս. Վօլթէմանի տեղ՝ Վօլթէմառ. Ռօզէնկրանցը՝ Ռօզէնկրաֆթ. Գիւղէնշթէրնի տեղ՝ Գիւղէրսթոն, և Օգրիքի փոխարէն մի որեւէ ազնուական և այլն:

Գործողութիւնն անցնում է միւլենոյն տեղը, բայց Շէքսպիր երկու գլխաւոր փոփոխութիւններ է արած:

Առաջինը, նախընթաց Համլէթի մէջ, Համլէթի Օֆէլիային պատահելը Ռօզէնկրանցի և Գիւղէնշթէրնի հետ ունեցած տեսակցութիւնիցն առաջ է, իսկ երկրորդին մէջ յետոյ. և այդ շատ իրաւացի է:

Որովհետև թագաւորը ուզում է իմանալ Ռօզէնկրանցի և Գիւղէնշթէրնի միջոցաւ թէ արդեօք Համլէթի խենթութիւնը իսկական է, ինչպէս որ Պոլոնիուսը հաստատում էր. բայց Համլէթի Օֆէլիայի հետ խօսելուց յետոյ՝ թագաւորը կ'իմանար թէ սէրը չէ պատճառ նորա խենթութեանը, ուստի դորանից յետոյ այդ լրտեսութիւնը աւելորդ կ'ըլինէր:

Երկրորդ ամենակարեւոր փոփոխութիւնը, որ աչքի է զարնում, այն է՝ որ նախընթաց Համլէթի մէջ թագուհի Գէրթրուտան տեղեակ չէ իւր ամուսնոյն ոճրագործութեանը. և երբ Համլէթ դորանում նորան ամբաստանում է, նա բողոքելով ամ-

բաստանութեան դէմ, միանում է իւր որդւոյն և օգնում է նորան վրէժ առնել թագաւորից, և այսպէսով քաւում է նա իւր յանցանքը:

Իսկ երկրորդ Համլէթի մէջ, Գէրթրուտա թագուհին բոլորովին տարբեր մի դեր է խաղում:

Նա Կլօդելուսի արբանեակն է, անյողդողդ և անզեղջ է իւր յանցանքի մէջ:

Նոյնպէս առաջին Համլէթի մէջ Համառօտուած է բեմի վրայ ներկայացման տեսարանը և Ռօզէնկրանցի, Գիւդէնշլթէրնի և Համլէթի մէջ եղած տեսակցութիւնը:

Ոչ մի խաղի ներկայացում այնպիսի յեղափոխութիւն չէ պատճառել Ներոպայում, ինչպէս Համլէթինը: Նա այնքան յուզեց Անգղիան, որքան Քոռնէյլի Սիտը՝ Գաղղիան. բայց տասնևիններրորդ դարուս գրագիտաց լաւ յայտնի է, թէ որքան մեծ է տարբերութիւնը այդ երկու ողբերգութեանց:

Համլէթի՝ գրէթէ դժուարաթափանցելի, խօհուն, այսու հանդերձ տիեզերական մարդկային տիպարը չէ կարելի բաղդատել Սիտի՝ սիրահար, եռանդուն, ցեղասէր և վրիժառու բնաւորութեանը հետ:

Մինչև անգամ Շէքսպիրի Համլէթից յետոյ, Համլէթներ գրուեցան, որոնց միւնը գրած է Ժան Ֆրանսուա Գիլսի, տասնևութերորդ դարուն ըսկիզբներին. մի ուրիշ Համլէթ ևս «Ֆիլասօթէր» ա-

նուամբ տասնևեօթ դարուն սկզբին, աշխատակցութեամբ Ֆլէգէրի և Բօմօնի, իսկ Միշէլ Քառէ և Ժիւլ Պարպիէ յօրինեցին Ամպրուադ Թօմայի նուագերգութեան համար Համլէթի մի (Կերուխտո) :

Նոքա այնքան ընդունելութիւն չգտան հասարակութիւնից, որովհետև Շէքսպիրի Համլէթը կարծես ծածկում և մթագնում էր այդ Համլէթներին իւր սգաւորի սև վերարկուի տակ :

Ադամ Էօլէոս Շլէգէր գերմանացի գրագէտը, որ ծնած է 1779-ին և մեռած 1850-ին, գրած ունի նոյնպէս մի Համլէթ, հետևելով և շատ քիչ փոփոխութիւն մտցնելով Սաքսօ Գրամաթիկոսի առասպելին :

Նորա Համլէթը չէ մեռնում, այլ վերջի գործողութեանը մէջ ամուսնանում է իւր սիրուհի Ջիկրիտի հետ, որ վիշապայազթ Ջիկֆրիտի ցեղին պատկանող դիւցազնուհի էր և նորա հետ բարձրանում է գահի վրայ, իբր յազթող և փառաւորեալ իշխան :

Այս Համլէթն էլ միւսների պէս մոռացութեան տրուած է թէպէտ, սակայն նոր մատենագիրներէից շատերը, որոնց թւումն է Բիւլանէր, հաւանում են այդ վերջաբանին, ցաւում են Շէքսպիրի ողբերգութեան այդպէս տխուր վերջանալուն, թէ ինչո՞ւ Շէքսպիր հետևելով թատեր հին աւանդութեանց, այդպիսի մի ցաւալի վախճան է տա-

լիս իւր դիւցազնին՝ Համլէթի կենացը. բայց իմ
խոնարհ կարծեօք, Շէքսպիր չէր կարող այլապէս
վարուել. ոչ թէ իւր ժամանակի ժողովրդեանը
հասկացողութեան և կամ ճաշակին հետևելուն
համար միայն, որ անպատճառ կըսահանջէր՝
ողբերգութեան վախճանը լինի մահ, խոխողումն
և աւերած, այնպէս որ գործող անձինք բոլորն էլ
մեռած փռուեն բեմի վրայ:

Զէ, Շէքսպիրի Համլէթ ողբերգութեան դրած
վերջաբանը ունի իւր բարոյական, հոգեբանական
ամենակարևոր շարժառիթը. Ֆրանսուա Հիւգօ
նոյնպէս հաստատում է որ այդ վախճանը անխու-
սափելի, անհրաժեշտ և հարկաւոր էր:

Եթէ բանաստեղծը ստիպուած լինելով շուտ
վերջացնել իւր ողբերգութիւնը, ինչ բան կարգե-
լէր նորան հետևել Գրամաթիկոսի առասպելա-
կան աւանդութեանը, ուր Ամլէթուս, սպանելով
եղբայրասպան բռնաւորին, թագաւորէր նորա տեղ:
Շէքսպիր չուզեց այդպիսի հասարակ և սարդ կեր-
պով վերջացնել. հաւատացէք որ երկար խորհրդ-
դածելուց և ամենակարևոր պատճառներից դըր-
դեալ այդպէս վարուեցաւ, և այդ պատճառներից
գլխաւորը, իմ կարծեօք, խաղի բարոյական հաւա-
սարակչութիւնը պահպանելու համար էր, որն-
որ բուռն կերպով խանգարուած է Պոլոնիոսի
մահուամբը: Ինչ էլ որ լինի, հաստատ է որ հե-
ղինակը շատ երկար մտածել է գորա վրայ, և

մենք այժմ գիտենք որ Շէքսպիրի Համար Համ-
լէթը եղած է այն, ինչ որ եղաւ Ֆաուստը Գէօ-
թէյի Համար, դոցա կենաց գլխաւոր պարագմուն-
քը և հոգսը:

Միայն Բէլլըֆօրէի առասպելին հետ բաղդա-
տելով Շէքսպիրի թատրերգութիւնը, կարելի է
հռչակել Շէքսպիրի հանճարը:

Համլէթը, ինչպէս որ շատերը կարծում են,
մը վիպասանական կամ գաղափարական էակ չէ.
ընդհակառակն նա մեզ ժամանակակից մտածող
մարդու տիպարն է, որին հեղինակը դրել է մը դիւ-
ցազնական դարու մէջ. մինչև անդամ շատերի և
մասամբ իմ կարծեօք, Շէքսպիր բնականից առած
լինի իւր վայելչագեղ, նուրբ և ազնուական Համ-
լէթի տիպարը:

Կարլ Զելլերշլակի *) գերմանական Շէքս-
պիրի ընկերութեան տարեգրութեան մէջ՝ ասում է
Կարլ Էլզէ, թէ «Շէքսպիրի ժամանակ ևս կային
Կլօզիուսի, Գէթթրուտայի, Համլէթի Համանման
տիպարներ, որոնց մէջ տեղի ունեցած արկած-
ներն և ոճիւրները նման են Բէլլըֆօրէի պատ-
մածին»:

Օրինակ բերենք նախ՝ Մարի Ստիւարտը,
և նորա ամուսնոյն սպանութեան պատմութիւնն ու
իւր ամուսնանալը մարդասպան կոմս Բոտուէլի

*) Բիւխնէր. Համլէթ Գաննմարքային:

Հետ. նմանապէս իննը տարի չետոյ էստէքս կոմսի թունաւորուելով յանկարծամահ լինելը Դուբլինում, և նորա որբեայրի կնոջ ամուսնանալը կոմս Լէյ-չէստէրի՝ իւր վաղեմի և կասկածելի ծանօթի Հետ: Յայտնի բան է որ սպանուած էստէքսի որդի երիտասարդ կոմսը՝ որ նշանաւոր եղած է իւր եղբրական մահովը, նման վիճակ ունի Համլէթին, և շատ հաւանական է որ Շէքսպլր Համլէթը շարադրած ատեն նորան աչքի առաջ ունենար:

Այստեղ պիտի յայտնենք Աղէքսանդր Մեղի-էրի կարծիքը նոյնպէս Համլէթի մասին, որին մասամբ համաձայն են:

Նորա «Շէքսպլր և իւր գործերն ու քննադատները» կոչուած գիրքը, որ պատուած է Գաղղիայի Ակադէմիայից, իմ կարդացածների մէջ ամենանոր և ամենաընտիր գրուածքն է Շէքսպլրի մասին, որ տպուած է սորանից հինգ տարի առաջ, 1882-ին: Այնտեղ Համլէթի վարմունքը ցոյց է տալիս իրականութեան տեսակէտով:

«Համլէթ, ասում է, սրատկանում է մարդկութեան այն դասակարգին, որոց մեղամաղձոտ խառնուածքը և մտաց նուրբ թափանցողութիւնը աւելի ընդունակ, աւելի զգայուն են անում նոցա՝ մարդկային ցաւոցը և վշտաց, քան թէ մեզ շնորհեալ բնութեան բարեացը:

Այս վիպասանական դիւցազունքը շատ վաղ են զգում կեանքի նշանակութիւնը, վհատութեամբ

և արհամարհանաց երգիծանքով նայում են նորա վրայ, մինչև անգամ դեռ թշուառութեան մէջ փորձառու չեղած:

Գալիս են աշխարհք ամեն տեսակ վիշտ կըրելու տրամադրութեամբ, առանց ունենալու այդ վշտերն ու ցաւերը ընկճելու ուժը:

Գերմանացիք բաղդատում են Համլէթը Գէօթէյի Վերթէրին. չիրաւի, շատ բնաւորութեան յատկանիշներով նման են միմիանց. երկուսին էլ մօտ միւսնոյն փափուկ և հիւանդոտ զգայնութիւնը, նոյն տխրութիւնն ու գոռոզութիւնը, փիլիսոփայաւական խորհրդածութեանց միւսնոյն ընդունակութիւնը, բայց երկուսն էլ չափազանց շատ են քըննում իրենց սեպհական անձնաւորութիւնը, սաստիկ շատ են զննում մարդկութիւնն ու աշխարհը, նորա վրայ կարեւոր մի դեր կարենալ խաղալու համար, որնոր կըվայելէր մարդկութեան:

Մարդիկ ծնած են գործելու համար. դրէք այս փափուկ արարածները մի սարսափեյի վտանգի դէմ, չեն կարող քաջութեամբ դիմադրել, կորանալով կընկճուին հանգամանաց դառն բեռին տակը»:

Այս ասած խօսքերը չիշեցնում են ինձ Գէօթէյի դիւրարեկ ամանը, որին նմանեցնում է Համլէթը»:

Եւ իրօք տեսնում էք, թէ որքան նմանութիւն կայ Գէօթէյի՝ Համլէթի մասին տուած

բանաստեղծական բացատրութեանը և Մեզիկ-
րի հոգեբանական քննադատութեանը մէջ:

Այս, Համլէթ մաքառելու համար ծնած չէ,
կաղնին կարող է փշրել նուրբ ամանը, նա ծնած է
միայն խոլիմանց և մտատանջութեան համար:

«Վերթէր բաւական ուժ չունի հրաժարուել
իւր սիրելի Շարլօտից և ոչ բաւականին թեթեա-
մտութիւն պարտազանցութեամբ առեւանգել նո-
րան Ալբէրտից:

Նմանապէս Համլէթը, այնքան անտարբեր
չէ մոռանալու համար թէ պարտական է իւր հօր
վրէժը առնելու և ոչ այնքան յանդուգն իւր
պարտքը կատարելու համար:

Նոցա երկուսին էլ մահուան պատճառը
մասնաւոր հանգամանքները չեն, այլ նոցա կազ-
մուածքն ու խառնուրդը, որ մէկին անձնասպանու-
թեան է դրդում և միւսին վաղուց փափագելի
մի մահուան:

Վերթէր անձնասպան է լինում, սիրելով
Շարլօտին, բայց այդ սէրը միայն իւր յուսահա-
տութեան պատրուակն է. Շարլօտին եթէ ճանա-
չած անգամ չլինէր, դարձեալ անձնասպանու-
թեամբ պիտի վերջացնէր իւր կեանքը:

Նոյնպէս և Համլէթ, եթէ ատեաժ էլ չլինէր
ուրուականին դարհուրելի տեսիլքը, ոչ աւելի եր-
ջանիկ պիտի լինէր, և ոչ աւելի խաղաղ:

Այդ երևոյթը չպիտի հանէր նորա սրտից երջան-

կազոյն և լուսաւոր մի այլ աշխարհ սլանալու ցանկութիւնը՝ թողլով այս ողորմելի երկիրը, որոյ մասին առաջին գործողութեան երկրորդ տեսարանին մէջ դեռ ուրուականն էլ չտեսած, գոչում է դառնութեամբ. «Ով Աստուած իմ, Աստուած իմ, որքան ծանրաբեռն, մաշած, ստորին և անպտուղ է թուում ինձ այս աշխարհի բոլոր ուրախութիւնները: Զգուած եմ կեանքից, անհ, զգուած. դա մատ խոտեր արտադրող մի պարտէզ է, հունտերով խեղդուած»:

Շատերը զարմացած են, թէ ինչո՞ւ Շէքսպիր իւր դիւցազնին յատկացուցել է տկար և տատամսող մի բնաւորութիւն, բայց ընդհակառակն այդ մինչև անգամ հիանալի է:

Նա՛ որ ընդհանրապէս հանդիսացրել է մարդկային կրից գերի եղած հերոսներ, Համլէթի մէջ ցոյց է տալիս մարդկային մի նոր տիպար. և ինչպէս զարմանալի ճարտարութեամբ նորա վիճակը դնում է համապատասխան իւր բնաւորութեան և բնաւորութիւնը վիճակին, և ինչ հանճարեղ կերպով միացնում է ողբերգութեան անցքին հետ:

Այո՛, Շէքսպիրի Համլէթը գաղափարական անձնաւորութիւն չէ, ինչպէս որ ներկայացնում է մեզ Հէնրի Մաուցլի *). Շէքսպիր որքան մեծ է իբրև բանաստեղծ, նոյնքան հաւասար մեծ է իբ-

*) Հէնրի Մաուցլի Անգ. բննադատ. Ռուսերէն Թարգմ. 1875:

ըն փիլիսոփայ հոգեբան. եթէ նորա ներկայացրած անձանց բնաւորութիւնները մեզ անհասկանալի թուեն, այդ չէ նշանակում որ դոքա անբընական են, այլ այդ ապացուցանում է մեր տգիտութիւնը, որ նորանց քննել չսկսած, տալիս ենք մեր վճիռը. մի՞թէ չկան ստեղծագործութեան մէջ այնպիսի արարածներ, որոնք իրենց տարօրինակ ձգտումներովը, գաղափարներովն ու զգացումներովը, գուցէ և Համլէթի նման հոգեկան տազնապից առաջ եկած անսովոր վարմունքովը մարդկանց կարճամիտ դատողութեանն առջև եզակիան համարուին, մինչև անգամ վիպասանական կամ գաղափարական:

Ի այց ոչ. մի հանճարի տասն և հինգ տարուայ աշխատանքը՝ սէտք է խոստովանուել, որ չէր կարող անբնական մի տիպար ընծայել աշխարհին: Եթէ շատ տեղեր անբացատրելի են կարծւում Համլէթի մէջ, որոնք իրաւամբ տեղի են տուած անհամար բանակուիւների վիճաբանութեանց և խօհմանց, պատճառը այն է, որ Շէքսպիր Համլէթի մարդը ներկայացնելու համար զիմած է ոչ թէ Գրամատիկոսի առասպելական պատմութեան, որոյ միայն՝ իմ կարծեօք, կմախքն է առել, այլ քաղել է իւր ժամանակակից քաղաքական անցքերիցը, իւր սեպհական փորձառութիւնից և անձից. այնպէս որ Յանոսի նման երկու երեսանի մի անձնաւորութիւն է Համլէթ, որի

դիմագծերը լաւ տեսնելու համար, պէտք է նախ
դիմակները հանել այդ երեսներէց, այլապէս
ասած՝ քննել հինն ու նորը, առասպելականն ու
պատմականը, հոգեկանն ու նիւթականը, և յետոյ
մի վճիռ տալ:

Այս կէտի վրայ նոյնպէս շատ է վիճուած,
թէ արդեօք Համլէթը Շէքսպլրի նախադասած
բնաւորութիւնն է, թէ արդեօք այդ իւր սլափ-
կերն, իւր գաղափարն է: Տարակոյս չկայ որ Շէքս-
պլր շատ է դրած իրենից Համլէթի դերը մէջ.
շատ յատկութիւններ, որ իրեն էին պատկանում,
շատ խօսքեր, որ Շէքսպլրի վշտաց արձագանք-
ները կարող են համարուիլ, արտասանվում են Համ-
լէթի բերանով: Այստեղ իբրև օրինակ առաջ կը
բերեմ «Լինել թէ չլինել» մենախօսութիւնը *),
որը մէջ մի կէտ ցոյց է տալիս Շէքսպլրի սեպհական
մտածութիւնը, այլ ոչ Համլէթինը:

Երբ ասում է՝ «Ո՞վ կուզէր տանել այս ծանր
բեռները, տքալ և քրտնել տազնապայօյզ կեան-
քի տակ, եթէ մահից յետոյ մի որևիցէ բանի եր-
կիւղը, այն անքննելի աշխարհին սարսափը՝ որ-
տեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել,
չվրդովէր մեր կամքը», և այլն, և այլն:

Այստեղ ուշադրութիւն դարձնելով պիտի
տեսնեք որ Համլէթը իւր կարծիքը չէ ասում, ո-

*) Համլէթ. գործ. երրորդ. տեսարան առաջին:

բովհետև խօսում է մի անքննելի աշխարհի մասին, որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել. սակայն Համլէթ՝ առաւել քան բոլորեքեանք, լաւ տեղեկութիւն ունի այդ անքննելի աշխարհի մասին, որտեղից մի վերադարձող կայ նորա համար, և այդ մի հասարակ ճանապարհորդ չէ, այլ իւր հայրը:

Ուրեմն այդ բանը Համլէթի համար հակասութիւն է, ուստի հաստատ կարող ենք ասել որ Շէքսպիր այդ մենախօսութիւնը դրած ժամանակ սաստիկ վրդովմունքից կարող էր իւր ցաւոց արձագանքը իւր դիւցազնի բերանովը արտայայտել. և մէկ անգամ որ իր կողմիցը խօսեցրել է իւր դիւցազնը, ինչո՞ւ համար չենթադրել թէ ողբերգութեան ընթացքում դանազան տեսարանների մէջ Համլէթ խօսում է Շէքսպիրի կողմից. օրինակ, այն դասը, որ երիտասարդ իշխանը տալիս է Էլսնէօր հասած աստանդակիան դերասանաց՝ խօսելով նոցա հետ թատերական արուեստին վերայ շատ հմուտ կերպով: Օրինակի համար, դարձեալ Շէքսպիրն է խօսողը Համլէթի բերանով Պոլոնիոսի հետ, երբ որ նախատում է մանաւանդ նորան: Որովհետև պատմութեան աւանդութեամբ, երբ Շէքսպիր դերասան էր, Անգլիայի առաջին նախարարը՝ լորդ Բիւրլէյձ մի շրջաբերական հանեց բոլոր դերասանների դէմ, և նոցա պատժեց՝ թափառական և բախտախնդիր սրիկաներ անուա-


ներով: Շէքսպիր վրէժ է առնում Բիւրլէյճից՝ Պոլոնիոսի պատկերին և բնաւորութեան տակ նորան ներկայացնելով. և այդ շատ հաստատ և ճշմարիտ է...: «Լորդ Բիւրլէյճ մի կըթողական գիրք հրատարակեց իւր որդոյն՝ Բոզէր Սէսիլի նուիրուած, որ յետոյ կոմս Սալիսբերի եղաւ. երբ այն գիրքը կարդաք, կըտեսնեք թէ Բիւրլէյճի՝ իւր որդուն տուած խրատները, բառ առ բառ ճիշդ և նման են Պոլոնիոսի՝ իւր որդւոյն Լաէրտի տուած խրատներին *)»:

«Մեթէ այդ թատրոնի ծեր թշնամուոյն՝ Բիւրլէյճ-Պոլոնիոսին ուղղուած չի՞ն Համլէթի այս խօսքերը, երբ կասէ դերասանաց, թէ «Նորա համար մերկասրուն աղջկանց կաքաւը, կամ մի աղտեղէ պատմութիւն է հարկաւոր, եթէ ոչ քուն կըլինի»:

Եւ դեռ սորա նման շատ օրինակներ, որք ապացուցանում են, թէ Շէքսպիր իւր Համլէթ ողբերգութեան մէջ դրել է ոչ թէ միայն վիպասանականը իրականութեան հետ խառնած բարոյական մի կապ, այլ գլխաւոր դերերը իւր ժամանակակից անձանց և պատահարաց, մանաւանդ իւր սեպհական անձին ցաւոցն և փորձառութեանց տիպարովն ու դրոշմովն է կնքել:

*) Յ. Հիւգօ. երկու Համլէթներ:

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ



Մ Ա Ս Ն Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Համէթի տարիքն ու կազմուածքը:—Ֆրանկ Մարգալ:
Վիլհելմ Մեսթէր:—Ռոսսիի նամակը:—Թէ արդեօք Համէթի
խելագարութիւնն իրական է, թէ ոչ:—Տուրզենեվի կարծիքը՝
Համէթի եւ Դօն Քիխօտի մասին:—Հաւատք ու Սէր Համ-
լէթի:—Քին՝ Համէթի դերում:—Քաջութիւն եւ խորամանկու-
թիւն Համէթի:—Վստահութիւն եւ վարանումն:—Լիւդվիկ
Բէօրնէ:—Զրպարտութիւն եւ գովեստ:—Համէթ խստասիրտ
չէ:—Հանգամանքների բերմունքը:—Մարդ՝ իւր պարտակա-
նութեանն առաջ:—Վիճակաց միանմանութիւն եւ վրէժ:—
Հանճարեղ վերջաբան:—Քարոյական հաւասարակշռութիւն եւ
յորդոր:

Շատ հեղինակ քննադատներ, ուղեւ են որոշ
իմանալ Համլէթի տարեքը. ի միջի այլոց պ. Մին-
թօ, և անգղիացի նշանաւոր մատենագիր Ֆրանկ
Մարգալ, որ մի քննադատութիւն գրեց Շէքսպլերի
մասին, որնոր տպուած է 1875 թուականին, և որից
Բիւխնէր շատ օգտուած է իւր նոր քննադատու-
թիւնը գրելու ատեն:

Մարգալի կարծիքն այս է. «Նթէ Համլէթ

Երեսուն տարեկան լինի, այնքան չափահաս մի մարդու մայրը, չէր կարող այնպիսի մի բուռն տըրփանաց կերք տածելու չափ՝ զգայուն լինել, որ մինչև անգամ իւր ամուսնոյն սպանչին կողակիցը դառնալու սեռապղծութեանը յանձնառու լինի: Սակայն Համլէթ չէ կարող այնքան Երիտասարդ լինել, քանի որ քսան և երեք տարի գետնի տակ թաղուած գանգին տիրոջը՝ Յօրիքին ճանաչում է, և գանգի միմիայն երեւոյթը իսկոյն յիշեցնում է նորան Յօրիքի երգերն ու ծաղրաբան սրախօսութիւնները, որոց մասին խօսում է Համլէթ՝ բացատրելով իւր միակ բարեկամ Հօրացիօյին: Ուրեմն այս փաստի վրայ հիմնուելով՝ ինչպէս կարելի է որ քսան, և կամ ըստ Դաուտէնի և Տուրգենեվի, տասն և եօթը տարեկան, գրեթէ մի երեսայ Համլէթը յիշէ և ճանաչէ իւր ծննդից մի քանի տարի առաջ թաղուած Յօրիքը...»:

Ուստի պէտք է որ Համլէթ առ նուազն քսան և ութը կամ երեսուն տարեկան լինի անպատճառ: Իսկ Մարգալ հերքում է այս փաստը, ասելով թէ «այդ ոչ մի նշանակութիւն չունի. դրանով միայն կարելի է ապացուցանել Շէքսպիրի անհոգութիւնը, որով վերաբերվում էր իւր աշխատասիրութեանց մանր պարագաների հետ»: Յետոյ յարում է, թէ Շէքսպիր շատ բախտաւոր էր իւր շահերի մէջ. այսուհանդերձ սաստիկ էլ աշխատասէր. բայց որքան որ պարապում էր իւր ողբերգու-

Թիւնները շարագրելով, նոյնքան էլ ուշադիր և հոգատար էր լինում հասոյթների դրամարկղին. այնպէս որ մահիցը միքանի տարի առաջ իւր հարստութեան բերած տարեկան եկամուտը հասնում էր մինչև հազար կամ երկու հազար ստերլինգ ոսկւոյ, որ կանէ հարիւր, կամ երկու հարիւր քսան և հինգ հազար ֆրանկ: Եւ իւր կեանքի վերջի տարիներում Սթրաթֆորդ գնաց, և առանձնացաւ այնտեղ իւր ընտանեաց գրկում, հաւաքած դափնեացը վրայ հանգչելու, հանգիստ ու փառաւորեալ ապրելով իւր հարստութեան եկամուտներովը*):

«Թերևս շահու սէրը մերթ ընդ մերթ արգելք էր դնում նորան՝ աւելի լաւ և ուշադրութեամբ սրբագրելու իւր երկասիրութիւնքը: Դորանից է որ գուցէ սպրդած լինին դոցա մէջ անհոգութեամբ կամ մոռացութեամբ՝ միքանի անխնամ թողուած կէտեր»:

Այս բոլոր՝ Մարգալի տուած բացատրութիւնները ինձ չեն կարող երբէք համոզել. Համլէթի տարիքը չէր կարող ամենևին կարևորութիւն չունենալ Շէքսպիրի համար, և ծանրակշիռ կերպիւ չգրադէցնէր նորա միտքը տասն և հինգ

*) Բայց այդ գումարի քանակութիւնն անհաւատալի է թուում միքանիսին. չնայելով որ այդ բանը ստուգում է դարուս մի նոր հնագէտ՝ Շէքսպիրի ժամանակից մնացած մի քանի հին մուրհակներն ու թղթերը հետազօտելով:

ամեայ խոյմանց և սրբագրութեանց ընթացքում: Թերևս իւր խանդի եռանդեան տակ միայն չափըշտակուած, ցամաք և նիւթական կէտերն անխնամ թողած լինի իւր ուրիշ աշխատութեանցը մէջ, որոց մէկ կամ երկուսը աճապարանօք և սակաւ ժամանակի մէջ է հեղինակել, բայց ոչ Համլէթը:

Նւ լերջապէս անտեղի կըլինի ենթադրելը, թէ այնքան նուրբ, այնքան իմաստնալից և խորագննին կերպիւ մարդկային հոգին անդամագինող հանճարը, իւր խաղերի ամենակարևոր և ամենաբարձր դիւցազնին, որոյ հետ գրեթէ հոգուլ և մտօք շաղուել և ապրել է, մոռանայ՝ մի պատշաճ տարիք չատկացնել:

Մարգալ, որ խորհուրդ կըտայ եղել Լոնդոնի դերասանաց՝ Համլէթի դերում ըստ կարի մատաղ և երիտասարդ երևալ, չէր իմանում արդեօք, որ Շէքսպիր երբ Սթարթֆօրդից Լոնդոն եկաւ, Բիւրբէյճ արդէն խմբապետ էր Լոնդոնում, և ներկայացնում էր իւր խմբով «Սև եղբարք»*) կոչուած մի մենաստանի սրահում, և միայն (ինչպէս որ սկզբներում յիշեցինք) երկու տարի Լոնդոնում թշուառ և թափառ տատանելուց յետոյ մտաւ Շէքսպիր Բիւրբէյճի խմբին մէջ: Ես ինքս համոզուած եմ և պարագաներն էլ ցոյց են տալիս, որ

*) Անդդ. (Blackfriars):

Բիւրբէյճ տարիքով մեծ էր Շէքսպիրից, և մարմնով էլ մեծ զի էր և գէր. և մանաւանդ նորա դիւցագունքը տաղանդով և մեծ յաջողութեամբ ներկայացնող միակ ողբերգուն Բիւրբէյճն էր: Ուստի Քնչպէս կարելի է եւթադրել, որ Շէքսպիրի նման բճախնդիւր և արուեստին հմուտ մի հեղինակ, Բիւրբէյճի նման մեծ զի և գէր մարդու տասն և եօթը կամ քսան տարեկան պատանուց մի դերը յանձնէ. որն մինչև անգամ (ինչպէս ասում են) ոչ թէ անհոգութեամբ, այլ միմիայն հանդիսականաց առաջ գիրութիւնն անմեղադրելի հանդիսացնելու համար՝ Համլէթի մենամարտութեան տեսարանին մէջ *), իւր մօրը թագուհւոյն խօսեցնում է, որ մի թաշկինակ առաջարկելով Համլէթին ասում է՝ «գէր է և շնչառութիւնը կարճ ու քրտնում է»: Այս խօսքերից շատերը հետևեցնում են, թէ Համլէթը գէր պիտի լինի. բայց սխալ է այդ:— Մի թէ Համլէթի նման հոգեպէս տանջուող մի անձն կարող էր գէր լինել. մտատանջութեամբ չարչարող մարդկանց գէր և պարարտ լինելը բացառութիւն է. և բացառութիւնն ընդունելի չէ գեղարուեստի մէջ. գեղարուեստական միջոցով պէտք է միայն ներկայացնել այն, ինչ որ բոլորին դիւրմբբոնելի և հասկանալի է, բնական օրինաց վրայ հիմնուելով՝ գեղագիտական և քերթողական կեր-

*) Համլէթ. գործող. հինգերորդ. տեսարան երկրորդ:

պով ներկայացնել բնականը. հասարակն ազնուացնել, իրականը գեղեցկացնել, ամենայն բան մարմնաւորել՝ միշտ օգտուելով թէ գեղեցկից, և թէ ճշմարտից: Ալէքսանդր Ռեմպալի որդին գեղարուեստի բնաբան է դնում այս խօսքը. Le beau dans le vrai, et le vrai dans le beau—գեղեցիկն ճշմարտին, եւ ճշմարտն գեղեցիկին մէջ. և որքան իրաւացի է այդ... և որքան նոյնպէս անարդար է կարծել թէ Շէքսպիրի վերին աստիճան զարգացեալ գեղագիտական ճաշակը մոլորուի դորանում, և մի բացառութիւն գնէ այն անձնաւորութեան մէջ, որով ուզում է մարդկութիւնը պատկերացնել: Եւ շատ կոշտ երևոյթ ունի տեսնել մի Համլէթ՝ նուրբ, փափուկ, մտածկոտ, և խոթացեալ, յանկարծ մի լայն, և մտոտ ու ճարպոտ մարմնոյ մէջ:

Ինչ կասէինք, եթէ գինեսէր և որկրամուտ փիլիսոփայ Փալսթաֆը գար մեր առաջ և՛ «լինել թէ չլինել» մենախօսութիւնը արտասանէր: Փալսթաֆ ապրում է գուարթաբարոյ փիլիսոփայական անհոգութեամբ, հետեաբար գեր է. Համլէթ՝ որ մտածում և տանջվում է, պէտք է բնական բերմամբ նիհար լինի: Շէքսպիր իւր Յուլիոս կեսար ողբերգութեան մէջ կասիուսի տիպարը ներկայացրած է նիհար և վատուժ, որի համար կեսար ինքն ասում է. «կանացի և սաստիկ նիհար երևոյթ ունի, երևի շատ է մտածում» և այլն: Եւ այս պարզ ու բնական է:

Համըլէթ մի երեխայ չէ, և ոչ էլ գէր *) . և եթէ Բիւրբէյճ նորան մի սլատանի ներկայացնել ուզելով տարիքը փոխէր, դարձեալ դժուար թէ յաջողուէր, որովհետև Շէքսպիրի ժամանակ ներկեր և զանազան քիմիական բաղադրութիւններն ու կեղծամներ գործածելու և դոցանով տարիքն անգամ փոխելու արուեստը շատ թերի էր . ինչպէս բեմական տեսարանք, նոյնպէս և կեղծամներ չկային անգլիական բեմի վրայ **) . դոցա միայն տասն և եօթներորդ դարու վերջերին սկսան գործածել, և այն էլ կանայք միայն ***):

* *) Շէքսպիրի դարուն բժշկականութիւնն այն աստիճան ծաղկած չէր . ուստի զրագէտք էլ չէին կարող այնպիսի մի բացառական նուրբ կապ դնել մի դիւյազնի բնաւորութեան եւ կազմուածքի մէջ:

***) Մեզիէր . Շէքսպիր եւ իւր քննադատները:

***)) Մինչեւ անգամ տորանից միքանի տարի առաջ պարոն Հալիվէլի աշխատութեամբ լոյս տեսած Շէքսպիրի թատրերգութեանց անգղիէրէն հատորին մէջ գտնուած երեւելի դերասանաց պատկերները՝ Շէքսպիրի դիւյազանց դերերի տարազում (costume), այնքան ալլանդակ են եւ անճշմարտաման, որ մարդու զարմանք է բերում եւ զրեթէ ասպնուցանում է ծայրայեղ տղիտութիւն, կամ չսփազանց անհողութիւն տարազուց եւ դէմքի փոփոխութեանց մասին: Գորանից կարելի է հետեւցնել, թէ ինչ պիտի լինէր Շէքսպիրի ժամանակ:

Գիցուք թէ Համլէթ գէր է մինչև ուրուականի երևալը, բայց դորանից յետոյ այնքան երկար ժամանակ տանջուելով և մտածելով մինչև վերջի գործողութիւնը եթէ չնիհարանայ, շատ անբնական և անճշմարտանման կըլինի. և վերջ բանի Համլէթի գէր կոչուելը միմիայն Շէքսպլի ներողամտութեան արդիւնքն է, ինչպէս որ քիչ առաջ բացատրեցի:

Գառնանք կրկին տարիքի լսնդրին. իմ կարծեօք, աւելի ճշմարտանման և հաւանական կըլինի եղբակացնել, թէ Համլէթի մայրը տարեց կին է, որնոր՝ կամ մարդասպանից երկիւղ կրելով, և կամ ծեր ամուսնիցը ճանճրանալով, վա՛վաշտ բորբոքմամբ նետուած լինի Ալօդիուսի գիրկը: Այն տեսակ մի կիրք, մարդս ամեն տարիքի մէջ կարող է զգալ. մանաւանդ կանայք մեծաւ մասամբ, երբ անցնում է այդ սիրոյ բանաստեղծական ոսկեդարը, ուր սիրվում էին և սիրում սըրտով միայն, ուր պչրանօք (avec coquetterie) կարող էին շատերի սիրտն ու միտքը մոլորեցնել: Սակայն երբ երազի պէս ցնդում են ցնորք, և փարատվում են մինչև անգամ հոգեկան հաճոյից պատրանքը, այն ժամանակ գոնեա մարմինը՝ անցելոյն յիշատակովը զրգուած հաճոյից սնունդ է պահանջում, և կինը դեռ չիջած ծերութեան խարխուլ սանդուխքից, ուզում է վերջին անգամ սնուցանել նորան: Մանաւանդ Հիւսիսային, կամ Սքան-

դինաւեան ցուրտ կլիմաներն տակ կանայք ուշ են զարգանում. և երբեմն տարեց կանանց համար սէրը դառնում է մի որևէցէ մարմնական գրգիռ, կամ մի պատրուակ՝ այս կամ այն նպատակին ձեռնհաս լինելու համար, այն տարիքն մէջ, որ կոչվում է ընդհանրապէս երկրորդ երեսասարդութիւն:

Ինչո՞ւ չենթադրել, թէ Կլօդիուս ամուսնացած լինի տարեց կինոջ հետ, նորա գաղտնապահութեանը ապահով լինելու, և Գէրթրուտա ընդունած լինի նորա առաջարկութիւնը, եղեռնագործից վախնալուն, և գուցէ մի վալաշոտ կրքով մոլորուած նորա կողակիցը դառնալու համար, որպէսզի կեանքն էլ ապահովէ, և կրկին թագաւորէ նորա հետ՝ վայելելով նորա պիղծ գրկախառնութիւնքը. մանաւանդ այն դարում՝ ուր տիրում էր անբարոյականութիւնը, այդ զարմանալի չէ:

Այս բոլորն զգալու և ի գործ դնելու համար հարկաւոր չէ որ թագուհին երիտասարդ լինի, ընդհակառակն այսպիսի մի վարմունք կարելի է սպասել մի տարիքն առած թագուհուց, որին ինքն Համլէթ յանդիմանելով ասում է՝ պատկերաց բաղդատման տեսարանին մէջ. «Ո՛չ, դու չե՞ս կարող այդ սէր անուանել, որովհետև քո տարիքն մէջ՝ սաստկաբորբոք արիւնն անգամ սառում և հանդարտվում է, ու միայն ողջախոհութեան ձայնին է լսում»:

Այժմ թող հետևեցնելով դատեն ընթերցողներս, թէ մի կին թնչ տարիք պիտի ունենայ, երբ նորանում արդէն սառում և հանդարտվում է սաստկորորոք արիւնն անդամ *), և թէ թնչ տարիք ունեցող կինը կըլսէ ողջախոհութեան...: Այս խօսքերից բացարձակապէս կարող ենք հետևեցնել, թէ Համլէթի մայրը տարեց է, և Վլօդիուսի եղբայրասպանութեան շարժառիթը սէրը չէ, այլ միմիայն ընչաքաղցութիւնն, և նախանձօտ փառասիրութիւնը:

Շէքսպիր որ շատ անգամ պատկերանում է իւր Համլէթի անձնաւորութեան քօղին տակ, չէր զիջանիլ նոյնպէս մի պատանւոյ բերանով՝ այդ իմաստալից խօսքերն ասել. նա՛ որ տասնհինգ տարի սրբագրել է շարունակ Համլէթը, և էրվինուսի ասածին պէս՝ «ձգտել է միշտ կենդանապէս մարմնացնել մի որևիցէ բարոյական գաղափար՝ յոյժ կարևոր հանդիսացնելով նորան»: Համլէթն էլ մարդկութեան կենդանի և մարմնացեալ գաղափարն է՝ իւր բոլոր թերութեամբ և յատկութիւններով, նորա տագնապայօց ճակատագիրը՝ ըմբռնելի է մտածող մարդկութեան համար: Համլէթ՝ ինչպէս շատ մարդիկ, մարմնով հիւանդօտ, բայց խելքով ուժեղ է, բեղմնաւոր և խոհեմ. գուցէ և այդ խոհեմութիւնն է պատճառ

*) Համլէթ. գործող. երրորդ, տեսարան երրորդ:

իւր անորոշ բնաւորութեան, և ոչ երկչոտութիւնը:

Այլ եթէ նա խոհեմութեամբ և միայն սխալութեւոց վախենալով չէ կարող վերջնական կերպիւ մի որոշում տալ իւր անելու գործին, և դանդաղանում է կատարել իւր հօր ուրուականի պատուէրը, այդ մի երեխայական բնաւորութեան արդիւնքը չէ, այլ մասամբ իւր խառնուածքին, մասամբ էլ լուրջ և արդարասէր հոգւոյ արգասիքն է:

Եւ միթէ քիչ կան աշխարհիս վրայ Համլէթներ, որք տատամսում և վարանում են իրենց պարտականութեան առաջ, նորա չափ էլ հիւանդոտ, զգոյշ և բազմակողմանի խորհրդածող չլինելով՝ դարձեալ սարսափում են նորանից, և եթէ դիպուածով կատարում են իրենց պարտքը, դորա համար նոքա առաքինի են կոչվում: Եւ այդ չքալէտք է մեզ զարմացնէ, որովհետեւ պարտակատար մարդիկ շատ քիչ կան աշխարհումս, իսկ առաքինիք՝ գրեթէ բոլորովին բացակայ են, և այդ է պատճառը, որ պարտահատուց մարդը առաքինի է համարվում:

Սակայն Համլէթ ի բնէ առաքինի ծնած է, ընդունակ ամեն տեսակ բարի և վեհանձն գործերի, գոնեա Գէօթէն էլ՝ իւր Վիլեհմ Մեսթէրի բերանով այդպէս է վկայում նորա մասին: Ուստի լաւագոյն է որ այստեղ խօսեցնենք Վիլեհմ Մեսթէր, և մի վայրկեան տեղի տանք հանճարեղ հսկային դատողութեանը:

«Որքան որ յառաջ էի տանում Համլէթն ուսումնասիրելու աշխատութիւնս, նոյնքան ինձ դժուար էր լինում՝ նորա ամբողջութեան մասին մի որոշ գաղափար կազմել. դանազան մանուածապատ շրջաններում մոլորուեցայ՝ իզուր երկար թափառելով: Ի վերջոյ՝ նպատակիս մի նոր ճանապարհով հասնելու յոյսն յղացաւ սրտիս մէջ:

«Եւ սկսայ որոնել Համլէթի բնաւորութեան գլխաւոր յատկանիշները, որպէսզի կարողանամ գննել նորան այնպէս, ինչպէս որ էր իւր հօր մահիցն առաջ. աշխատեցայ լաւ դանազանել և ըմբռնել այն հանգամանքները, որք կախումն չունէին այդ տարաբախտ արկածից, և ընդհանրապէս նորա հետեւանքներիցը, և գուշակել միանգամայն, թէ ի՞նչպիսի երիտասարդ կրգոյանար Համլէթից, եթէ այն տեսակ մի աղէտք տեղի չունենար:

«Անտարակոյս՝ խանդակաթ և ազնուական ցողունի վերայ չենած այս արքայական ծաղիկը կըմեծանար անխուսափ՝ իւր վեհափառ հօր ազդեցութեան ներքև: Արդարադատ բարոյականութեան գաղափարը՝ իւր իշխանական բարձրութեան գաղափարին հետ միացած, և ազնուատոհմ ծագման շնորհիւ ազնուացեալ բարւոյն դգացումը՝ յանկարծ դարգացան նորա մէջ: Իշխանութեան համար ծնած՝ իշխան էր, և կըցանկար թագաւորել, որպէսզի բարեաց բարութեանը գէժ

խոչնդոտներ չլինին: Արտաքուստ վայելչագեղ, բընիկ ազնուաբարոյ, և ի սրտէ հեգահամբոյր, երկտասարդութեան մի գերընտիր օրինակ, որ իւր տէրութեան ուրախութիւնը պիտի լինէր:

«Այն սէրը՝ որ տածում էր ՕՓէլիայի համար, առանց բուռն կրքի, մի գաղտնի նախազգացումն էր ամենաքաղցր վայելքներէ: Ասպետական մարգուց եռանդը յատուկ չէր իւր բնաւորութեան. հարկաւոր էր որ ուրիշներէ յատկացած գովեստից կամ քաջի անուանակոչութիւնիցը գրգռուէր իւր եռանդն ու խանդը: Անխառն և մաքուր զգացմամբ շուտ կընկատէր արդարակորով մարդուն, և գիտէր գնահատել այն խաղաղ մտերմութիւնը, որով անկեղծ հոգին հրճուանօք է ապաստանում մի բարեկամ սրտի մէջ. մինչև մի որոշ աստիճան սովորած էր պատուել՝ ինչ որ բարի է, և ինչ որ գեղեցիկ է հանդիսանում արուեստից և գիտութեանց մէջ: Հասարակն և ռամկականը կըտաղտկացնէին նորան, և եթէ երբէք ատելութիւնն արմատանար իւր հոգւոյ մէջ, արհամարելու համար կըլինէր բոլոր այդ կեղծ և փոփոխամիտ արարածները, որք սողում են արքունիքում, և հեգնօրէն նրանց ծաղրելու հաճոյքը վայելել: Հանդարտ խառնուածք ունէր և անկեղծ ու ազատ վարմունք: Ոչ բարեկամ ծուլութեան, և ոչ սաստիկ գործունեայ՝ պալատին մէջ. Համալսարանի սովորական դասերը կըշարունակէր: Զուարթա-

բարոյ՝ լեզուով, քան թէ սրտով. լա. և մարդահաճ էր ընկերութեան մէջ, և գաղտնապահ, առանց թէպէտ միանալու նոցա հետ, որք ի չարն են գործածում արդարութեան, ճշմարտութեան և բարի վայելչութեան զգացումը, նոյնպէս և կարող էր մոռանալ և անյիշաչարութեամբ ներել նախատինքը:

«Հիմա երևակայեցէք դուք այս իշխանը այն վիճակի մէջ, ինչպէս որ ձեզ նկարագրեցի, որի հայրը մեռնում է յանկարծ: Չնայելով որ ամբարտաւանութեան, կամ միապետութեան կրքով թելադրուած չէր, այսուհանդերձ արքայորդի մնալով՝ կարող էր բաւականութիւն գտնել: Բայց հիմա անսպասելի կերպով ստիպուած է աչքի առաջ ունենալ այն զանազանութիւնը, որ կայ հպատակի և մի վեհապետի մէջ: Թէպէտ թագը ժառանգական չէր, սակայն եթէ հայրը կենդանի մնալով՝ երկար ժամանակ գահակալէր, այն ատեն անշուշտ նորա միակ որդուն ինքնասիրութիւնը և ապագայում իւր հօրը յաջորդելու յոյսը կարող էր հաստատուիլ և զօրավիգն ունենալ: Գորա փոխարէն՝ չնայելով Կլոդիուսի փառաւոր խոստումներին, զգում է իրեն մերժուած իւր հօրեղբորիցը, հաւանականաբար ընդ միշտ: Եւ նա մնում է յուսաքանդ՝ շնորհանկեալ, օտար մինչև անգամ այն ասպարիզի մէջ, որնոր ի մանուկ տիոց իբրև իւր ժառանգական կալուածն էր նկատում: Այստեղ բնաւորութիւնն էլ իւր առա-

Ջին տխրութիւնն է դգենում, գգալով որ մի հասարակ սեպուհից էլ ստոր է կանգնել: Ինքն իրեն ծառայ է կարծում բոլորին: Եւ իւր հեգասհամբոյր, դիւրամատչելի և պաշտպանողական վարմունքին վերջ տալով, պատուանկեալ և ուրիշին կարօտ է մնում՝ իբրև մի թիւր երազ յիշելով իւր անցեալ վիճակը: Ի գուր հօրեղբայրը ճիգ է դնում միսի-թարել նորան, ցոյց տալ իւր դրութիւնը մի ուրիշ տեսակէտով. բայց նա չէ կարողանում չգգալ իւր ոչնչութեան իրականութիւնը:

«Նրկորդ հարուածից նա վերաւորվում է ի սրտէ, աւելի խոր է նուաստանում. և այդ հարուածը իւր սօր ամուսնանալն է: Այդ հաւատարիմ և խանդակաթ որդին, իւր հօր մեռած ատեն խորհում էր, որ դեռ մի մայր ունի, կրօնսար ապրել նորա ընկերութեամբ, և մեծարել անչաչտացած դիւցազնին ստուերը. բայց մօրն էլ է կորցնում՝ մահից աւելի դառն մի պատրուակաւ: Այդ բարեխնամ ծնողի պատկերը՝ որ սիրում են որդիք, այլևս գոյութիւն չունի. անօգուտ է ուրեմն դիմել մեռելոց, և ապարդիւն է շահ սպասել կենդանիներից. մայրն էլ մի կի՛ն է, և կոչումն ունի՝ դիւրարեկութիւն:

«Ահա այն պահուն, առաջին անգամ իրեն որր է գգում. և չկայ այլ ևս կեանքի մէջ մի երջանկութիւն, որ կարողանայ իւր կորուստը լիացնել. ի բնէ տխուր և մտածկոտ չլինելով, տխրութիւնն

ու մտածութիւնը ծանրաբեռն մի ստիպմունք են դառնում իրեն համար:

«Նրեակայեցէք՝ այս երիտասարդը, այս իշխանաց որդին, որ ապրում է ձեր առաջ, ներկայացրէք ձեզ նորա դրութիւնը և լաւ դիտեցէք նորան, երբ իմանում է իւր հօր ստուերի յայտնուելը: Մօտեցէք նորան և տեսէք այդ մռայլ գիշերուան մէջ, երբ պատկառելի ստուերը երևում է իւր աչաց, շարժվում և տեղափոխվում է հսկայական քայլերով: Մի դարհուրանաց սարսուռ է սլանում նորա անդամների մէջ, խօսում է խորհրդաւոր ուրուականի հետ, և տեսնելով որ իրեն գլխով նշան է անում՝ հետևում և լսում է նորան. և այն ահարկու ձայնը, որ իւր հօրեղբօրն է ամբաստանում, որոտում է իւր ականջների մէջ, վրէժխնդրութեան հրակէր է կարդում՝ կրկնելով նորան այս սրտապատառ խնդիրքը. «Յիշիւր ինձ»:

«Նւ երբ ստուերը ցնդում է, լինչ է մնում մեր առաջ. մի վրէժխնդրութեան ծարաւի դիւցանգն, թէ՛ մի օրինաւոր իշխան, որ իրան երջանիկ է զգում բռնաւորից վրէժ առնելու կոչուած լինելուն համար...: Ո՛չ: Շիտթն ու յանկարծայատ գոյժը կասեցրին լքեալ երիտասարդին, որ խիստ և դառն է նայում իրեն ժպտող սինլքօրներին. երդվում է չմոռանալ այդ ուրուականը, և ի լքումն այդ բոլորին՝ ձայնում է այս նշանաւոր բացագանչութիւնը. «Աշխարհս աղաւաղել է. ո՛վ

անէծք, փոխանակ քս նորան բարեկարգելու... երանի բոլորովին ծնած չլինէի»:

«Իմ կարծեօք, ահա այս խօսքերի մէջ է սլարունակվում Համլէթի ամբողջ վարմունքի բանալին: Ինձ համար ակններև յայտնի է, որ Շէքսպիր ուզեց մեզ ցոյց տալ, մի ահագին ձեռնարկութեամբ և սլարտքով ծանրաբեռնեալ հոգի, որին նա չէ կարող կատարել: Աարծուս ես որ այս միտքը, սկզբից մինչև վերջը տիրում է ողբերգութեան մէջ»*):

Սև այս գեղեցիկ հատուածը վերջացնում է Գէօթէ՝ կաղնոյն և դիւրաբեկ ամանին հիանալի նմանողութեամբը, որ գրութեանս սկզբներում յիշած եմ արդէն:

Չնայելով այդ բացագանչութեան, Համլէթ գարձեալ իւր բնիկ անձնուիրութեամբ գոհում է իրեն տարաբախտ ճակատագրին բերմանցը. իւր հօր վրէժն առնելու, և եղեռնագործին պատժելու համար առաքինական համբերութեամբ տանում է ամեն վիշտ ու տառապանք, փիլիսոփայական խորհրդածութեամբ քննում և չափում է աշխարհը և նորա մէջ կատարելու գործը: Որդիական սիրով տոչորուած, և իւր բոլոր յոյսերիցը չանկարծ և անսպասելի կերպիւ գրկուած իշխա-

*) Քաղեալ Ֆրանսուա Հիւգօյի Գաղղիերէն Թարգմանութիւնից:

նը գրկում է նոյնպէս իւր անձը ամեն հաճույքներէից և վայելքներէից: Մարդկային և առնական հպարտութիւնը ոտնակոխ անելով, տխմար և խելագար է ձևանում՝ ենթակայ լինելով անարժան անձանց ծաղրին և լրտեսների հսկողութեանը:

Կարճ դատողութեան տէր մարդիկ նորան իսկապէս խելագար են կարծում, և նա կարողանում է աշալուրջ կերպով ազատել իւր անձը հօրեղբօր որոգայթներէից, որոց կարելի է լարէր իրեն գէժ, եթէ միայն հաստատ գիտնար բանի էութիւնը: Բայց խելագարութիւնը նորա կենաց պահապան գրահն է լինում. այն անգին կենաց պատսպարանը, որ լիովին մի հօր սպանութեան վրէժն առնելու համար պիտի գործածուի. նա այլևս ինքն իրեն չէ պատկանում, այլ անողոք ճակատագրին աւար դարձած՝ նորա փշոտ ճիրանների մէջ լսում է անընդհատ ահաւոր ուրուականին անդառնալի պատուէրը, որ առաջնորդում է իւր խօսքերն ու գործերը:

Սխալ է նոյնպէս միքանի մատենագրաց՝ Համլէթն իսկապէս խելագար կարծելը: Նա ունի այնպիսի յուզեալ բոպէներ, որ վշտից, կամ արտաքին առարկաների, կամ անձանց ներկայութիւնից շփոթ է զգում, բայց այդ տևողական չէ լինում:

Օրինակի համար՝ ուրուականի հետ խօսե-

լուց և նորա պատուէրը իւր սնակի վրայ արձանագրելուց յետոյ *) մտնում են Հօրացիօ և Մարցէլլօ, և նոցա խնդրած ատեն, որ իւր սրի վրայ գաղտնապահութիւն երդուեն, յանկարծ լսում է ուրուականի ստորերկրեայ ձայնը, որ հրամայում է՝ «երդուեցէք»: Այդ ձայնից քաջալերվում և միանգամայն այլայլում է Համլէթ: Արդէն ուրուականի երևոյթը ջղային ուժեղ ցնցմամբ այդպէս պատկերացած էր իւր չիշողական երևակայութեանը վրայ, որ այդ ձայնից էլ կրկին յուզուելով՝ հայլիացմամբ անդրադառնում է ուրուականի պատկերը օդի մէջ, ամեն տեղ կարծում է նորան տեսնել, և ասում է իւր ընկերաց. *Hic et ubique*— «Ա՛ստ և ամեն տեղ»: «Ուրեմն ի՞նչտեսնք տեղերս»:

Ահա միայն այն պահուն միքանի վայրկեան շփոթվում է նա, բայց միտքը միշտ նախապատրաստ և նուրբ է մնում: Եւ իսկոյն խորամանկութեամբ խելագար ձևանալու մտադրութիւնը յայտնում է Հօրացիօ և Մարցէլլօ ընկերներին, խնդրելով նոցանից՝ որ ձևերով, կամ երկդիմի խօսքերով չյայտնեն որ իրենք արդէն տեղեակ են այդ բանին:

Վիկտօր Հիւգօ միայն՝ դարուս երևելի հանձարը, շատ երևակայեալ և քերթողական տեսակէտով է քննում Համլէթը, ասելով միանգամայն, որ նա

*) Համլէթ. գործ. առաջին. տեսիլ հինգերորդ:

վերացեալ և առանձնացեալ մի արարած է:

Սակայն այդ յատկութիւններն էլ շատ անգամ խելագարութիւնից կարող են գոյանալ, մինչդեռ Համլէթ խելագար չլինելուն համոզուած եմ: Բայց աւելի հետաքրքիր կըլինի ընթերցողացս, կարգալ հռչակաւոր ողբերգու դերասան Ռոսսիի նամակը*), որ ուղղած է Դէյլի Տէլէկրաֆ անգղիական լրագրին՝ ի սատասխան միքանի դատաքննչաց, որք մեղադրում էին Ռոսսին՝ Համլէթի խելագարութիւնը չափազանց իրական ներկայացնելուն համար:

«Ինձ մեղադրում են, ասելով՝ թէ Համլէթին սկզբից մինչև վերջը մի ճշմարիտ խելագարի տիպար եմ տուել, և փոխանակ Հիւսիսային ցուրտ կլիմայի տակ ծնած մտածող և մաղձոտ մի անձի՝ պատկերացրել եմ նորան իբրև մի զգայուն և կրակոտ Արևելցու տիպար:

«Այդ քննադատութիւնն ինձ շատ զարմանք պատճառեց. մանաւանդ որ՝ ըստ իմ կարծեաց, Համլէթ ոչ մի կերպիւ չէ կարող խելագար համարուել. մինչ իսկ խելագարութիւն էլ կեղծելիս՝ ակներև չայտնի է կեղծիքը. իւր նրբամտութիւնը արգելք է այդ բանին, որնոր շատ անգամ զգալի է լինում խորիմաստ խօսքերով, որ Պոլո-

*) Բիւխնէր. Համլէթ Դանեմարքացին—Hamlet le Danois.

նիւսն անգամ, որնոր Համոզուած է Համլէթի խե-
լագարութեանը, ասլեցնում են: Եւ լէրջապէս Պո-
լոնիւսն մի մուկի հետ շիտթելով, սպանում է.
սակայն չնայելով այդ եղեռնագործութեան, թա-
գաւորը կրկին չէ հաւատում Համլէթի խելագա-
րութեանը:

«Գալով կլիմայի խնդրին, և նորա՝ Համլէթի
բնաւորութեան ազդելով ներգործելը, ինձ Համար
միշտ աննշան, և անկարևոր է Համարուած: Իմ
դատողութեամբ, Համլէթ՝ մարդկային մի բնդհա-
նուր տիպար է, որոյ մէջ, բնիկ և կամ յետաստաց
խառնուածքի միջոցաւ, յառաջ է գալիս մի շիտ-
թութիւն, մասամբ խորհրդածութեանց և բանա-
կանութեան, և մասամբ էլ իւր անձին կամաց,
և արտաքին պարտուց գործադրութեան մէջ:
Այսպիսի մի մաղասային խառնուածք ունենալով,
յետ է մղում ջղոտ և զգայուն հոգւոյ խանդը, որն
որ տարակոյս է արտադրում, և մինչ իսկ լարա-
նումն և յուսահատութիւն, որ կուլ է տալիս իւր
սեաւ ալիքներէ տակ՝ սիրոյ բացայայտ և կսրովի
սզդրունքն անգամ:

«Իարձեալ կասեմ, որ այս տեսակ մի խառ-
նուածք ամեն կլիմայի տակ կարող է գոյութիւն
ունենալ: Որոշակի կերպով ոչ Սքանդինաւական
է, և ոչ Իտալական, և այլն և այլն»:

Իարձեալ Բիւխնէր ասում է, թէ «Սալվինիի՝
Երևելի Իտալացի ողբերգուին պատկերացրած Համ-

լէթը, մի կատաղաբարոյ մարդ է և յատկապէս թըշ-
նամի ամեն տեսակ ծաղրածութեանց, որով աւելի
նմանում է առասպելի մէջ նկարագրուած՝ վրիժ-
առու և անողոքելի դատաւոր իշխան Ամլէթօսին:

« Այդ ձևով Համլէթ ներկայացնելը, կասկա-
ծելի է անում նորա կեղծեալ խելագարութիւնը,
որնոր անհրաժեշտ է »:

Այլևս հարկ չկայ դիմել Մարգալի, Բէօր-
նէի *) և Մաուցլիի **) առաջ բերած փաստե-
րին, քանի որ ուշադրութեամբ կարդալով Համ-
լէթը, յայտնի կըտեսնենք, որ Շէքսպիրն էլ նո-
րան խելագար չէ հանդիսացրած:

Սակայն ըստ Մաուցլիի և Մեդլէրի, երբէք չէ
կարելի հերքել, որ Համլէթ հիւանդոտ չլինի. այնու-
նի նա էլ իւր հիւանդոտութիւնը, բայց այդ ակտից չէ
վնասվում նորա առողջամտութիւնը, չէ մթաղնում
խելքը: Այդ լոկ միանալով իւր աղէտալի ճակա-
տագրին, դառնութեամբ լքցնում է նորա կեանքը:

Նւ շատ իրաւացի է գերմանացոց գտած հա-
մապատկեր նմանութիւնը՝ Գէօթէյի Վերթէրին և
Շէքսպիրի Համլէթին մէջ, որոց կարծեացը Մեդլէր
լիովին համաձայն է:

Ամեն մարդ և ամեն առարկայ ունի իւր հա-

*) Լիւզվիկ Բէօրնէ. գերմ. գրագէտ, քննադատութիւնք,
Քարգմ. Ռուսերէն, 1869-ին:

**) Անդրիայի քննադատ:

մապատկերն ու հակապատկերը. ամեն բաների մէջ կարելի է բաղդատութիւն մտցնել, բայց դորա համար հարկ չկայ, և մինչև անգամ կարծես անտեղի կըլինի, երկու կողմանց միոյն՝ լաւ յատկութիւնները չգնահատելը: Տարօրինակ է անշուշտ եթէ մինը Շիմպանզէ կամ Գօրելլօ կապիկիներին, ոյժն ու քաջութիւնը գովելիս, նոցա մէջ անհաւատալի լաւ յատկութիւններ գտնէ, և դոցա դուրս ցայտեցնելու համար՝ բաղդատէ նորանց պատերազմական մի երիվարի հետ, և պախարակելով ուրանայ նորա տիրասէր և սանձահար հլութիւնը, և կամ մի վերաւոր եղջերուի հետ բաղդատելով, մեղադրէ նորա սարսափն ու շիտթութիւնը:

Այսպէս էի մտածում՝ Տուրգենեվի յօդուածը կարդալիս, Զէրվանտէսի Դօն Գիխօթին և Համլէթի մասին *): Այդ երկու զգալապէս տարբեր անձանց մէջ չէ կարելի մի որևէ նմանութիւն մտցնել, և մանաւանդ բոլորովին անտեղի է պակասաւոր և ստոր գտնել Համլէթի բնաւորութիւնը՝ համեմատելով Դօն Գիխօթին:

Համլէթ հալածուած է ճակատագրի հարուածներից, ու շօշափելի և դառն իրականութիւնից. իսկ Դօն Գիխօթ բիւր ցնորքներից, և լսօլական բանդագուշանքներից, որք եթէ ունին իրենց խաբուսիկ և զաւեշտական երևոյթի տակ

***) Гамлетъ и Донъ Киходъ. Москва 1874.

մի բարոյական հիմնաւոր ձգտումն, դարձեալ չէ կարող հաւասարել և նմանել Համլէթի իսկական վշտերի կեղծ խելագարութեան ծածկոյթին տակ քողարկուած՝ սոսկալի հոգեկան պատերազմին, և ամենաբարձր հանճարեղ և բարոյական մտքի հետ:

Համլէթի խելագարութեան մէջ խելք ու վիշտ կայ. իսկ Դօն Քրիսթի խելքի մէջ՝ խելագարութիւն և ցնորք:

Դօն Քրիսթ թշնամիներ երևակայելով բորբոք-վում է պատերազմական եռանդեամբ՝ անգիտակցաբար, Հռովմի սագի նման, որ թշնամեաց ստուերները տեսնելով երկիւղեց սկսաւ գոչել, և դիպուածով քաղաքն ազատուեց: Եւ Հռովմայեցիք պատուելով փառաւորեցին ազատիչ սագին լիշատակը:

Համլէթ խելացի դատողութեամբ տեսնում է վտանգը, զգում է զարհուրելի ճակատագրին իսկութիւնը, և ի սէր իւր հօր՝ անձնուիրաբար նետվում է նորա ժանեաց մէջ: Ինչպէս մի հաւատարիմ շուն, որ դիտակցաբար գցում է իրեն տիրոջը ետևից ծովի ալեացը մէջ, որպէսզի նորան ազատէ, և չկարողանալով հասնել իւր նպատակին, մաքառելով վտանգին դէմ խեղդվում է:

Ուրեմն եթէ պատվում են երկչոտ սագին՝ դիպուածական և անգէտ մի ծառայութիւնը, արդեօք ինչ պէտք է ասել հաւատարիմ շան գիտակցաբար գործած անվեհեր և տիրասէր անձնազոհութեան համար:

Նոյնպէս Դօն Քիլիսօթի երևակայեալ Գիւլսինէն ծիծաղ է շարժում, իսկ Համլէթի իսկական Օֆէլիան սիրտ և արցունք:

Միով բանիւ այս հակապատկերը դնելով, դարձեալ կասեմ՝ չենք կարող Համլէթը բնաւորութեամբ Դօն Քիլիսօթից անհամեմատ բարձր չդասել, Համլէթի մէջ խոհուն մարդը՝ նախամեծար չհամարել Դօն Քիլիսօթի գրեթէ խելագար անձնաւորութեան, և կարծել Տուրգենեւիլի հետ, թէ Համլէթ Դօն Քիլիսօթի նման հաւատք, կամ սէր չունի: Որովհետև նա ասում է, թէ «Դօն-Քիլիսօթ հաւատք ունի, և իւր անձը բոլոր ուժով մի գաղափարական էակի (ideal) է նուիրած, որոյ համար պատրաստ է գոհել իւր կեանքը, որին նա գնահատում և խնայում է այնքան, որքան որ հարկաւոր կըլինի իրեն, նորանով մարմնացնել իւր սիրոյ գաղափարը և այլն և այլն»:

Բայց ինչպիսի սէր և հաւատք է այն:

Անշուշտ կարդացած էք Չէրվանդէսի Դօն Քիլիսօթը, և լաւ նկատած էք որ իբրև ճարտար մի երկասիրութիւն, ունի իւր արժանաւորութիւնը, Շէքսպիր անգամ իւր կենաց վերջի տարիներում երբ առանձնացած էր Սթրաթֆօրդ, կարդալով Չէրվանդէսի Դօն Քիլիսօթը, ասած է. «Երանի այն երկրին, որ այսպիսի մի տաղանդ է արտադրել»: Այն, ինչպէս որ ասում է յաղթահանձար վարպետը, այդ մի տաղանդաւոր գործ է, որի նպատակն

է ծաղրել և պախարակելի հանդիսացնել այն
ժամանակի ասպետաց եղծումները:

Այսու հանդերձ, անընդունելի է Տուրգենևիվի
կարծիքը ինձ համար. չեմ կարող համակարծիք
լինել՝ Ծուխ և Որսորդաց օրագիրը վիպասանու-
թեանց հեղինակին դատողութեանցը:— Եւ ինչո՞ւ
համար, ինչո՞վ կարելի է հաստատել Համլէթի
անհաւատութիւնը, մինչդեռ նորա իւրաքանչիւր
խօսքերն ու գործերը հակառակն են ասպացուցա-
ցանում: Նորա սրտի մէջ հաստատ արմատացած
են հաւատոյ բոլոր սկզբունքները, որք շատ ան-
գամ մինչև մոլեռանդութեան են հասնում: Նա
հաւատում է ազնիւ մարդկանց ազնւութեան, Նա-
խախնամութեան, մահից յետոյ հոգւոյ անմահու-
թեան, և նորա պատժոյն ու վարձատրութեանը:
Միթէ հաւատքը չէ՞ որ ասել է տալիս նորան,
թէ «առանց Նախախնամութեան կամքին մի
ճնճղուկ անգամ չէ կարող ընկնիլ *)»: Եւ հաւա-
տալով կրկին աղօթքի ներգործութեան, թագա-
ւորին աղօթած ատեն չէ սպանում՝ վախենալով
որ նա երկինք կերթայ աղօթքի միջոցաւ, և իւր
վրէժխնդրութիւնը թերի կըլինի: Ամենապատեհ
առիթն անգամ ի բաց մերժելով, ոտնակոխ է
անում, և զոհում է իւր վրէժը հաւատոյ սկզբունք-
ներին: Միթէ նոյնպէս սիրելով չէ՞ որ հաւատում

*) Համլէթ. դորձող. վերջ. տեսարան վերջին:

է իւր միակ և սիրելի բարեկամ Հօրացիօյին, որին՝ իւր յուզեալ դրութեանը մէջ դիմելով, ասում է. «Հօրացիօ, բոլոր այն մարդկանց մէջ, որոց հետ յարաբերութիւն եմ ունեցել, դու գերագոյնն ես» *):

Նա հաւատք ունի. և սէրն է նորա հաւատքին հիմունքը, այն աստիճան որ իւր հօրը վրայ ունեցած սիրուցը ստիպեալ, հաւատում է ուրուականին անգամ. եւ եթէ պատահում է որ տարակուսի, տանջվում է դորանից և ճգնում է փարատել տարակոյսը՝ միանգամայն իւր նպատակին դիմելով:

Սիրում է նոյնպէս իւր մօրը. սիրում է Օֆէլիային, Գէօթէյի նկարագրած սիրով՝ խորհրդաւոր, բուռն և հոգեպէս. նորա սիրոյն չէ կարող հաւասարիլ քառասուն հազար եղբարց համագումար սէրը: Բայց կարծես իւր սիրտը ճմլվում է հօրը գերեզմանին մարմարիօնէ կափարջին տակ: Էլսնէօրի բարձրաւանդակին ցուրտ և կծու գեփիւռը, կարծես մի փոթորիկ է չարուցանում նորա սրտէ մէջ, ուրտեղից՝ իբր թէ վանելով ուզում է և սառնեցնել սէրը, բայց նա մաքառում է նորա դէմ, մանաւանդ ստիպուած լինելով՝ խեղդել սիրոյ ողբոց աղաղակը:

Իսկ Դօն Քրիսթի Դիւլսինէն միայն երե-

*) Համլէթ. գործող. երրորդ. տեսարան երկրորդ:

ւակայութեան կամ հիւանդոտ ուղեղի երազ է, որի սիրոյն արժանաւոր լինելու համար կարգաւորվ ասպետաց քաջագործութիւնները, և բորբոքուելով, ինքն էլ ՚ի զակն ի ձեռին գնում է ի խնդիր բախտին, արկածապատեհ լինելու (s'aventurer). քամու ջաղացքները ասպետաց պատերազմական բանակների տեղ ընդունելով՝ յարձակուում է նոցա վրայ, և սամիրիչի թասը Մամբրինի սաղաւարտը կարծելով՝ հագնում է գլխին, և դեռ սորա նման խեղկատակութիւններ, որ ծիծաղ կարող են շարժել:

Ամեն զգացմունք, ամեն գործ մի ընդհանուր սահման և չափ ունի, և ինչ որ անսովոր է, բնական չէ կարող համարուիլ. և եթէ հանդիպինք Դօն Քրիստօսի նման մի մարդու, կամ կըծիծաղենք, և կամ եթէ փող ունի՝ խորհուրդ կուտանք, որ ուղիղ Փարիզ բժշկապետ Շարգօսի մօտ գնայ բժշկուելու համար:

Այսուհանդերձ, ընդունում եմ որ Սպանիացի Չերվանտէսին մի այս տեսակ դիւցազն էր հարկաւոր՝ իւր գաղափարն ու բարոյական ուղղութիւնը լաւ պատկերացնելու համար: Այսինքն Դօն Քրիստօսի պատկերի տակ ծածկուած ցոյց տալ իւր ժամանակի թերութիւնքը: Իսկ Համլէթի պատկերի տակ հանդիսանում է ամբողջ մարդկութիւնը՝ իւր ամեն կողմերով:

Ուրեմն անօգուտ է աւելի իբրև մարդ դա-

տել Գօն Քիստօտին, ու գովելով նորան՝ սակասա-
ւոր գտնել Համլէթը:—Նւ ինչ հարկ կայ ասելը
նոյնպէս թէ Համլէթ անձնասէր է. թէ նա մի-
այն իւր էսն է մտածում, որ այդ էսը թանկա-
զին է իրեն համար. թէ նա լուի իւր անձը ստեղ-
ծագործութեան կեդրոնն է համարում, և մօեղի
նմանութիւնն բերելով ասել, թէ մեծին Աղէք-
սանդրի ճակատին վրայ նստած՝ իրեն համար
ստեղծուած և իրաւունքը համարելով՝ ծծում է
նորա արիւնը:

Բացի Տուրգենեվից, բոլոր մնացեալ երե-
ւելի հեղինակները՝ Գէօթէյլից սկսեալ մինչև Մե-
զլէր, և Բիւսնէր հակառակը դատելով, վկայում
են որ նա ոչ թէ անձնասէր, այլ մարդասէր և
անձնուէր էր, և իւր այդ տարաբախտ վիճակին
մէջ խեղճ իշխանը, ոչ թէ ստեղծագործութեան
մէջ մի որոշ կեդրոն ունենալն կարողանում էր ըզ-
գալ, այլ մինչև անգամ մի ապահով և հաստատ
տեղ չունէր իւր ծնողացը արքունեաց մէջ *), ուր
միմիայն իւր անձը նուիրած էր հանգուցեալ հօ-

*) Համլէթ եթէ լինէր անմասէր, չպիտի ասէր երկ-
րորդ գործողութեան մէջ Ռօզէնկրանցի եւ Գիլդէնշթէրնի հետ
խօսելիս, թէ ինքը փառասէր կամ անմասէր չէ. եւ մի
ընկուզի կեղեւի մէջ ամփոփուելով, անհուն տարածութեան
իշխան եւ տէր կրհամարէր իւր անձը, եթէ չար երազներ
չունենար:

ըր պատուէրին: Չնայելով այս ճշմարտութեանց, Տուրգենեւի ասում է. «ОНЪ ПОСТОЯННО ЗАНЯТЪ НЕ СВОЕЙ ОБЯЗАННОСТЮ»: Ուրեմն ո՞ւմ պարտականութիւնն էր իւր սպանուած հօր վրէժն առնելը. և մի՞թէ Համլէթ շարունակ դորանով զբաղուած չէ, և եթէ երբեմն մի օտար նիւթի վրայ է խօսում, դորա շարժառիթը կրկին իւր վրէժխնդրութեանը նպատակին համար չէ...:

Անտարակոյս, որովհետև հակառակ ամենայն եսական զգացմանց՝ Չնջում է իւր սրտից և մտքից մինչ իսկ անցելոյն յիշատակները, արհամարհում է աշխարհն, ատում է մարդկանց, նախատում է Օֆէլիային անգամ, լռեցնել կարծելով իւր սրտի սէրը, որպէսզի բոլոր իւր յիշողութեան զօրութեամբ կարողանայ յիշել և զգալ ուրուականին պատուէրը, և մի նոր Իսահակի նման իւր հօր գերեզմանաքարի վրայ ողջակէց է դառնում, մինչդեռ ազատարար ոչխարը չէ կախվում կաղնույ ճիւղերից:

Մի ուրիշ պատճառ ևս կայ՝ Օֆէլիայի և նորա մէջ տիրած սառնութեան, որ հոգեբանօրէն հեշտիւ կարելի է բացատրել, ահաւասիկ.

Աշխարհումս մի մարդու ամենասիրելի և ամենամերձ անձը մայրն է. մայրն է նորա կենաց աղբիւրը. և այդ աղբիւրի ապաստան և աւազան՝ մօրը խանդակաթ գիրկն է, մանաւանդ Համլէթի նման զգալուն, խելացի և ազնուաբա-

րոյ մի արարածի Համար. բայց երբ տեսնում է որ այդ Թանկագին մայրը օտարացել է իրենից, երբ այդ գիրկը, ուր ապաստանում էր, շուտապա պղծութեանց ճահիճ է դարձել. և այդ մայրական սիրտը, որ միայն սէր և խանդաղատանք պիտի կրէր իրեն Համար, բարսխում է խղճատանջ, ուխտադրուժ և արբանեակ լինելով հօրեղբօրը, այլևս դորանից յետոյ լինչ Համարմունք և վստահութիւն կարող է զգալ իւր մօր Համար, և լինչպէս այնուհետև սիրէ նորա սեռին պատկանող արարածները, լինչ կերպիւ Հաւատայ կանանց դիւրարեկութեանը, մանաւանդ Օֆէլիային. որովհետև նա էլ կին է, նա ևս կարող է ուխտադրուժ և ներողամիտ լինել եղբւանց, և հետևաբար երգուած է իւր հօր ստուերին՝ արմատախիւ անել իւր սրտիցը բոլոր կողմնակի զգացումները, նմանապէս և սէրը: Բայց կարողանո՞ւմ է յաջողիլ. Թէպէտ և արտաքուստ խիստ և կոպիտ է վարվում Օֆէլիայի հետ, և մինչ իսկ նորան խորհուրդ է տալիս մեհաստանի մէջ առանձնանալ, երկիւղ կրելով գուցէ, որ նա էլ մօրը նման չլինի, կամ տեսնելով Օֆէլիային ամեն օր, չմոռանայ իւր պարտքը՝ սիրուց յաղթուած:

Սակայն դարձեալ բնութիւնը չաղթանակում է, և Օֆէլիայի փակեալ դագաղի միայն երևոյթը պատառում է իւր սիրտը, որտեղից դուրս է

Ժայթքում այնքան ժամանակ այնտեղ ամփոփուած սիրոյ անդուսպ աղաղակը:

Պրանսուա Հիւզօ պատմում է, թէ ինչպէս էր խաղում երևելի դերասան Քինը այն տեսարանի մէջ, ուր Օֆէլիան մենաստան է ուղարկում, և թէ որքան հակառակ է այդ կերպ ձևացնելը Համլէթի բնաւորութեան:

«Նրևի այն խտուրթիւնը՝ որով վարվում էր Համլէթ Օֆէլիայի հետ, ամբողջ այդ տեսարանի ընթացքում՝ շատ ծանր տպաւորութիւն էր անում անգղիացի հանգիստականաց վրայ: Այդ տպաւորութիւնը մեղմացնելու համար Քին փոխեց մի երեկոյ իւր խաղալու կերպը: Մտիւր կուսաստան *) բառերը արտասանելուց յետոյ բեմից դուրս գնաց, բայց տեսնելով որ հասարակութիւնը չէ ծափահարում, կրկին վերադարձաւ, և Օֆէլիայի ձեռքը բռնելով համբուրեց, և հեռացաւ բեմից՝ սաստիկ ծափահարութեանց որոտման մէջ, որովհետև հանդիսականք հաւանեցան Համլէթի այս գգուանաց անսպասելի վերադարձին: Այդ երեկոյից յետոյ Քին միշտ միևնոյն կերպով կը հեռանար Օֆէլիայից՝ անընդհատ ծափահարութիւններ ընդունելով: Ժամանակակից անգղիացի քննադատք արդարացի գտան երևելի որբերգուին այս հնարքը:

*) Համլէթ. գործող. երրորդ. տես. երկրորդ:

Սակայն մեր խոնարհ կարծեօք, այդ ազաւաղութիւնը մի ծանր հակասութիւն է, և բոլորովին հակառակ ո՛չ միայն բնագրին, այլ մանաւանդ Շէքսպլերի գաղափարին»: Յետոյ վերջացնում է այսպէս.

«Համլէթի առ Օֆէլիա ուղղած կշտամբանքին այնպիսի խանդակաթ մեծարանօք վերջ տալը մի մեծ հակասութիւն է, որ ո՛չ մի փաստով չէ կարող արդարանալ. այն տեսակ մի վերջաբան ոչ միայն փճացնում է բոլոր այդ տեսարանը, այլ լիովին ոչինչ է դարձնում»:

Համլէթ այլասէս չէ կարող վարուել Օֆէլիայի հետ, և ճշմարիտ՝ Քինի այդ վարմունքը սաստիկ հակասական է:

Բայց Տուրգենեւի շարունակում է իւր հետազօտութիւնը ասելով, թէ նա մի կատարեալ երեխայ է, խաղում է երեխայաբար, գործում և խօսում է նոյնպէս:

Սակայն մենք որքան կարելի էր տրամաբանօրէն հաստատեցինք, որ Համլէթ երեխայ չէ: Եւ ըստ Տուրգենեւի, ամենեւին երեխայական մի կատակ չէ Պոլոնիոսի հետ ունեցած այն խօսակցութիւնը՝ ներկայացման տեսարանից յետոյ, երբ Պոլոնիոս գալիս է հրաւիրել նորան թագուհու կողմից, ասելով՝ «Տէր իմ, թագուհին կըփափագի ձեզ հետ խօսել, և այս բոլորը»*):

*) Համլէթ. գործող. երրորդ. տես. երկրորդ:

Համլէթ լսելով այս հրաւէրը՝ իբր թէ ծիծաղելու համար, ցոյց է տալիս Պոլոնիոսին երկնքի ամպը. ասում է, թէ դա մի ուղտ է, աքիս, կամ կէտ: Պոլոնիոսն էլ այդ ծաղրաբանութեանց՝ հաւանութեան սլատասխաններ է տալիս:

Իայց ոչ, այդ հարցումփորձն անելով, Համլէթ չէ ուզում ծիծաղել նորա վրայ, այլ բոլորովին խորագէտ նրբամտութեամբ ցանկանում է իւր կասկածն ստուգել, և իմանալ, թէ արդեօք թագաւորը առ ինքն ի՞նչ տրամադրութեան մէջ է գտնվում ներկայացումից յետոյ, թէ արդեօք առաջուան պէս պատուած և յարգուած է արքունեաց մէջ իբրև արքայորդի, թէ՛ մի դաւադրութիւն, կամ մատնութեան որոգայթ կայ ծածկուած Պոլոնիոսի հրաւէրին տակ:

Որովհետև եթէ նորան նկատում են իբրև մի վտանգաւոր անձն, ոչինչ բան չարգելէր եղբայրասպան եղեռնագործին, իրենից էլ ազատուիլ մի նոր ոճրագործութեամբ. և այդ եթէ վճռուած է, այլևս Պոլոնիոսն էլ կըդադրի իրեն հետ յարգանք վարուելուց: Եւ այդ բանը միմիայն Պոլոնիոսից կարող է իմանալ, թագաւորի գաղտնապահ խորհրդական աջ բազուկիցը: Ուստի՝ Համլէթ իւր բնիկ խորամանկութեամբ ուժգնակի և յանկարծ շեղուելով խօսակցութեան նիւթից, հարցումփորձ է անում նորան, մի որևէ ամպի մասին, և տեսնելով Պոլոնիոսի անփոփոխ շողոքորթու-

Թեամբ անձնահաճ և խոնարհ պատասխանելու ձևը, ասում է. «Ուրեմն կերթամ մօրս տեսութեան»: Ահա այդ «ուրեմն» բառը վկայում է ասածիս ճշմարտութեանը:

Համլէթ իւրաքանչիւր քայլափոխին երկիւղ ունի որ չսպանեն իրեն, և ուզում է ապահովացնել իւր կեանքը, որնոր այնպիսի մի մեծ գործի է նուիրած, որին գլուխ հանելու համար նախ կենաց յինարանն է հարկաւոր: Հետեւաբար, ինչպէս որ առաջներն ասացի, հաւատացող և մինչև անգամ մոլեռանդն լինելով, չէ ուզում իւր հօրը պէս դաւաճանութեամբ սպանուիլ, և առանց պատրաստութեան չուել հանդերձեալ աշխարհը: Որքան կրօնի սկզբմանց (որ մեր մօր կաթի հետ ծծած ենք) հիմունքը անխախտ են, նոյնքան և Համլէթ արդարացի է այդպէս վարուելով:

Նորա այդ ընթացքին, այդ դգոյշ վարմունքին պատճառը երկիւղը չէ. նա ևս ունի իւր քաջութիւնը, հակառակ Տուրգենեւի կարծեաց. նա էլ իւր ժամանակի մի Իդալօն *) է, վարժ սուր գործածելում, և ի հարկին մինչ իսկ յանդուգն քանց Դօն Գիլսօտ, որ փոխանակ իւր մտացը խօլական երևոյթներին վրայ յարձակելու, գնում է սուսերամերկ մի ահարկու ստուերի քամակեցը, յարձակվում է քաջաբար ճակատագրի անո-

*) Սպանիացի քաջ ազնուական:

դոք հարուածներն դէմ, և վհատում է. մի-
այն այն ժամանակ, երբ խոչնդոտներ են հան-
դիւում, որք արգելում են իրեն՝ հակառակ բո-
ւոր իւր գգոյշ միջոցներին, առնել իւր վրէժը:

Նշանաւոր մատենագիրք մատնացոյց են
անում նորան իբրև մի քաջի, և նմանացնում են
Սօփօկլի և Էսքիլի՝ Օրէսթին, և Քօրնէյի Սիտին, և
այլն:

Չնայելով, իւր հոգեկան բոլոր յատկութեան-
ցը, ստիպվում է քողարկել նոցա խելագարի կեղ-
ծեալ երևոյթին տակ, և իւր բնիկ բարեսրտու-
թեամբ խնայում է իւր մօրը: Սուրը՝ աւելի խօս-
քերին, քան թէ գործերին մէջ դնելով: Այսու-
հանդերձ գգոյշ լինելով ոճրագործութիւնից, որպէս
զի չի սխալուի, դարձեալ առիթը բաց չէ թող-
նում ձեռքից, երբ հաստատ հաւատում է, որ պի-
տի կարողանայ վերջապէս սպանել չարագործին:
Եւ մօրը հետ խօսած ատեն, երբ լսում է վարա-
գուրի ետեւից, օգնութիւն կոչող ձայնը *), չան-
կարծ մոկ տեսնել է ձեւացնում, որպէսզի մայրը
վրդովուելով՝ իրեն չարգիւէ. և վարագոյրի ետե-
ւածակուած անձը՝ երկիւղ կրելով, չի փախչի, և
շարունակելով մոկն հալածել՝ հասնում է վարա-
գոյրին, և այնտեղ թաք կեցողին սպանում է
սրի հարուածով:

*) Համլէթ. գործող. երրորդ. տես. վերջին:

Նա այդ անու՛մ է, ոչ թէ իւր անձը պաշտ-
պանելու համար, ինչպէս որ միքանի քննադատք
կարծու՛մ են, այլ ընդհակառակն հաստատ համո-
զուած լինելով, որ թագաւորն է այնտեղ պա-
հուած, որին սպանել էր պարտական: Սակայն
երբ վարագոյրը բարձրացնելով, տեսնու՛մ է յան-
կարծ Պոլոնիուսի անշունչ դիակը, խղճալով բա-
ցազանչու՛մ է ցաւագին. «Աւա՛ղ, ես քեզ ուրիշի
տեղ ընդունեցի, որ քեզանից առաւել կարեւոր էր
ինձ համար»:

Կրկին անգամ օգտվում է առթից վերջին
գործողութեան մէջ և թունաւոր սրով թագաւո-
րին վրայ յարձակուելով՝ սպանում է նորան: Ոչ թէ
ինքն իրանից դուրս գալով, կամ գրգռուած դրու-
թեան մէջ, ինչպէս ասում է Բէօրնէ, այլ բոլորու-
վին լուրջ դատողութեամբ, և համոզուած լինելով,
որ այս անգամ հարուածն անլրէպ կըլինի. և վայ-
րենի խնդութեամբ գոչում է, իմանալով մա-
համերձ լաէրտից, որ սուրը թունաւորուած է *).
«Թո՛յն, ուրեմն կատարի՛ր պաշտօնդ»:

Չորս նշանաւոր տեղեր կան ողբերգութեան ըն-
թացքին մէջ, ուր սրտառուչ աղաղակով պալթում է
Համլէթի տագնապալոյց հոգին: Սյդ աղաղակը իւր
բազմատեսակ ցաւոց և յուզմանց արձագանքն է:

Առաջինը՝ երբ ուրուականը տեսնելուց յետոյ,

*) Համլէթ. գործող. վերջ. տես. վերջ:

յուսահատաբար «երանի ծնած չլինէի» բացա-
գանչելը:

Երկրորդ՝ ներկայացուցից յետոյ վերջապէս
եղեռնագործը երևան հանելով, քստմնեցուցիչ
ծիծաղին աղաղակը:

Երրորդ՝ Օֆէլիայի գերեզմանին մօտ սիրոյ
արտասուալի և սրտապատառ գոչիւնը:

Չորրորդ՝ այն վայրենի և կատաղի ու-
րախութեան քրքիչը՝ թագաւորն սպանած
ատեն:

Տուրգենեւի, հակառակ այս կարծեաց խօսելով,
ուրանալով Համլէթի լաւ յատկութիւնները, երևի
ուզել է մի սրախօսութիւն անել: Այսուհանդերձ
շատ ժամանակակից խոհուն անձինք, չեն հաւա-
նում նորա քննութեանը, նոյնպէս և Լիւրլիկ
Բէօրնէյի, որի քննադատական յօդուածները թարգ-
մանած է ռուսերէնի Պետրոս Վէյնբէրգ: Դոցա
մէջ Բէօրնէյ ունի մի յօդուած Համլէթի մա-
սին, որով փոխանակ լաւ յատկութեանց՝ կարծես
կուսակցութեամբ, աշխատում է միայն թերու-
թիւններ տեսնել Համլէթի բնաւորութեան
մէջ:

Բայց ինչո՞ւ ստորացնել այդ բազմակողմանի
և վսեմ բնաւորութիւնը, որ Շէքսպիրի նման մի
հանճար՝ իրանից և իւր ժամանակակից անցքե-
րից և անձերի բնաւորութիւնիցը օգտուելով քեր-
թողապէս և գեղագիտաբար հիւսել և տիեզերա-

կան մի մարդկային տիպար է դուրս բերել: Եւ որին մի ուրիշ հռչակաւոր հանձար՝ Գէօթէն քրննում է հոգեբանօրէն, և գմայլելով ներբողեան է կարդում:

Խոստովանինք նոյնպէս, թէ մարդկանց համար աւելի հեշտ է իրենց նմանեացը վատ կողմերը գտնելն ու պախարակելը, քան թէ լաւերը փնտռելով՝ գնահատելն ու գովելը: Հակակրօութիւնն ու համակրօութիւնը թէպէտ միմիանցից տարբեր և հակառակ գգացմունքներ են, բայց ոչ խելքից կախումն ունին, և ոչ սրտից, այլ միմիայն ջղերից, և շատ քիչ մարդ կը գտնենք, որք կարողանան խելքով սրբագրել ջղերի՝ իրենց վրայ արած տպաւորութիւնը:

Համէթի դէմ միքանի խօսողների հակակրօութիւնն էլ՝ չգիտցուիր որոշ դատողութեան արդիւնք է, թէ մի ուրիշ գգացմունքի: Գուցէ կուսակցական ոգւով գրած լինին, և կամ մի այլ հեղինակի նորա մասին արած գովեստն ընդդիմախօսելու համար, և թերևս (որնոր աւելի հաւանական է) մի որևէ դերասանի խաղալու կերպին ջղերի վրայ արած ազդեցութեան ներքև *):

*) Ինչպէս Բէլինսկի՝ որ ռուս դերասան Մաչարովի խաղին ազդեցութեան ներքև յաիշտակուած, խօսում է Համէթի մասին:

Լըջարբար քննելով Համլէթի բնաւորութիւնը, շատ անչարմար պէտք է թուի մեզ Տուրքենեվի նորան խտասիրտ և նենգաւոր անուանելը. այդ ամախանները հազիւ թէ կարողանանք տալ առասպելական Ամլէթուսին:

Համլէթ խտասրտութեամբ չէ որ սպանել է տալիս Ռօզէնկրանցին և Գիլդէնշթէրնին. ոչ. նոցա սպանել տալով ուզում է մի մեծ արգելքից—լրտեսներէց ազատուել: Նա՛ որ առաքինական որդեսիրութեամբ նուիրած է իւր անձը հօր յիշատակին, ջնջում է իւր սրտիցը ամենայն օտար զգացմունք, որ այնքան տառապանք և տանջանք է հրում, որի իւրաքանչիւր քայլափոխը նպատակով է, և որ այդ նպատակի համար խեղդում և ջնջում է միանգամայն իւր սրտի երիտասարդական կրակոտ սէրը. ինչո՞ւ ուրեմն չջնջէ նոյնպէս իւր նպատակին խոչնդոտ երկու կասկածաւոր լրտեսներն կեանքը, որոնք գուցէ մի օր սպանելով իրեն, խափանեն իւր պարտքը, և այնպիսով իւր հօր սպանութեան վրէժը անկատար մնայ:

Եթէ այդ պատճառն էլ չլինի, նեղացած և ամեն կողմից տաղտկացած, դաւադիր, նենգամիտ լրտեսներով պաշարուած Համլէթը, այդ սեղմուած և ճնշեալ վիճակին մէջ (որովհետև ամեն ճնշում ի վերջոյ պայթումն կը գոյացնէ) չանկարձ արդար սրտմտութեամբ ապստամբելով, և մի վայրկեան բնականաբար իւր սովորական համբերութիւնը

կորցրած սպանէր մէկին, կարծեմ դարձեալ մեղադրելի չպիտի լինէր:

Նրբ ալէկոծեալ ծովի հողմահալած ալիքները ժայռերի են հանդիպում, որք արգելում են իրենց հոսանքը, կատաղաբար մռնչելով փրփրում և հարուածում են նոցա, արմատախիլ անելով դիւրաբեկ մարմիններն ու ծովեզերեայ տունկերը: Իսկ Համլէթի կեանքը մի գարհուրելի ալէկոծեալ ծով է, որ ամեն կողմից շրջապատուած և սեղմուած՝ մի բաժակ սլտոր ջուր է դարձել, որ եռում է սաստիկ, սակայն ի ներքուստ և անմռունչ, ուստի զարմանալի չի լինել, եթէ իւր եռման սաստկութիւնից՝ դուրս պուլիայ ջուրը, կամ փրփուրներ ցայտէ:

Չնայելով իւր խոհեմ և գգույշ ընթացքին, իւր բոլոր ճիգն ու եռանդը թուլանում և գլխակոր ընկճվում են ճակատագրի անողոք և սառն ճիւրաններէ տակ, որ իւր հիւանդոտութեան քողովը ծածկուած, անդամալոյծ է անում ողջ նորա շարժուածքն ու գործերը: Մինչև անգամ ամենապատեհ առթին, երբ բռնելով չարագործն հարուածում և դիտապաստ է անում նորան սրով, դարձեալ սխալվում է թշուառը, որովհետև վերցնելով վարագոյրը, տեսնում է որ փոխանակ արդար վրէժխնդրութեան, մի ոճիր է գործել՝ թագաւորի տեղ սպանել է Պոլոնիոսին—յանցաւորի տեղ անմեղը՝ իւր ընկեր Վաչրտի և իւր հարս-

նացու Օֆէլիայի հայրը. այն անմեղ կուսին, որի՝ յա-
կամայս խելագարութեան և մասամբ մահուանը
պատճառ է լինում անուղղակի:

Այստեղ նկատեցէք, թէ Շէքսպիրի հանճարը
ինչ սարսափելի և եղերերգական մի հանգուց է
դնում մեր աչքի առաջ, և ի՞նչ արիւնհային հաւա-
սարակչութիւն է տիրում բոլոր գործող անձինք-
ները մէջ:

Պոլոնիոսի սպանուելուց յետոյ, մի շատ հե-
տաքրքրական կարեւորութիւն է մտնում ողբեր-
գութեան կապին մէջ:

Այն տեսարանից սկսեալ անձկութեամբ
տեսնում ենք մեր առաջ ո՛չ թէ մէկ, այլ երկու
վրէժխնդիր երիտասարդներ, դոցանից մինը Համ-
լէթն է, իսկ միւսը Լաէրտը:

Լաէրտ, որ մինչև այն ատեն՝ մի առանձինն
նշանակութիւն չունէր, ճակատագրին բերմամբ՝
յանկարծ մի կարեւոր անձ է դառնում. հօրն
սպանութիւնից յետոյ, նա ևս մի վրիժառու դիւ-
ցազն է հանդիսանում մեր առաջ. ապստամբու-
թիւն է յարուցանում թագաւորին դէմ, և բարձ-
րաձայն պահանջում է նորանից իւր հօրը:

Իսկ Օֆէլիայի խելագարուելով մեռնելուց
յետոյ, մի տարաբախտ և անխուսափելի նմանու-
թիւն է մտնում՝ երկու դժբախտ երիտասարդաց
վիճակին մէջ:

Երկուսին էլ հայրը սպանուած է, Օֆէլիան

նոյնպէս խելագար մեռած, որ մէկի քոյրն էր, և միւսի հարսնացուն. իւրաքանչիւրը իրենց երկու սիրելեաց մահուան վրէժն են որոնում, վրէժ են աղաղակում, և վրէժ պահանջում, բայց տարաբախտաբար տարբեր կերպով, և այլազան միջոցներով:

Որովհետև որքան որ նոցա աղէտքն ու ճակատագիրը միանման և հաւասար են միմեանց, նոյնքան անհաւասար, աննման և տարբեր են կազմուածքով և հոգեպէս:

Համլէթ մտածող է, դանդաղ ու մուսլ, և մաղասային խառնուածքով անորոշ. իսկ Լաէրտ՝ գորեղ, առողջ, գահալիժաբար վճռող, անզգոյշ բնաւորութեան տէր, և կատաղի:

Ահա մարդկային երկու հակառակ բնաւորութեանց՝ մի հանճարեղ և դուրս ցատող հակապատկեր, մի վերին աստիճան բարձր ստեղծագործութիւն, որ Շէքսպիրի հանճարը ենթարկել է ճակատագրին քմաց, և անքննելի տնօրինութեանը, որի անընկճելի կամացը ներքև հաւասարվում են վիճակով երկու տարբեր անհատներ, որոնք փոխանակ խոհուն և քաջաբար գործելու, փոխանակ լաւ քննելով՝ դիւցազնաբար հասնելու իրենց նպատակին, մինը իւր դանդաղ խորհրդածութեամբ և վարանմամբ, իսկ միւսը անխորհուրդ և գահավէժ ձեռնարկութեամբ, նորանոր թշուառութիւններ, աղէտք և մահ են միայն պատճառում:

Երկու ծայրայեղ բնաւորութիւնք, որք գոհ-
վում են իրենց նստատակին: Վրէժխնդրութեան
հուրը՝ դեռ չլափած յանցաւորին, ցամաքեցնում
և այրում է նոցա կենաց մատղաշ ծառը,
և իւր կատաղի բոցերին մէջ ամփոփելով՝ ան-
յայտացնում է անմեղին և չարագործին միանգա-
մայն, միջոց անգամ չտալով որ վայելեն իրենց
վրէժխնդրութեան ստուղը: Ամենայն ինչ լուծւում է
գերեզմանական խորհրդաւոր ստուերին տակ, և մա-
հու պատանքը միայն իբրև դրօշակ յաղթութեան
պարզվում է և ծփում նորա գերանդւոյն վրայ:

Շէքսպիր Համլէթ ողբերգութեան մէջ ներ-
կայացնում է մարդը՝ իւր պարտականութեանն
առաջ:

Այդ ուրուականը՝ որ երևեցաւ Էլսնէօրի
բարձրաւանդակին վրայ Համլէթի հօր պատկե-
րով, մարդկային պարտականութիւնն է, որ
Շէքսպիրի հանճարը այլաբանօրէն մեզ ցոյց է
տալիս, այդ անողոքելի ուրուականը, որ ոտից ի
գլուխ գրահաւորեալ լուսնի մեղմ ճառագայթնե-
րի տակ յայտնվում է մեզ՝ սարսափ ազդելով
գիշերին. որ իւր հրամանաց իշխանութեան գա-
ւազանը ձեռին դուրս է գալիս իւր չաւիտենական
բոցավառ բնակարանից, և ցուրտ եթերաց կծուն

ատամները տակ բաց է անում իւր մահու ճիւնաթոյր սաւանը, և փայլեցնում է բացարձակ իւր միաձույլ սրգալատէ զրահը, և որոտաձայն յայտնում է իւր երկաթեայ կամփքը. որը առաջ մարդը՝ որ Համլէթն է, դողում է և վրդովում՝ չկարողանալով ճշգիւ կատարել նորա անյողդողդ և արդար պատուէրը:

Նորա դաշն ձայնը հրամայում է մեզ ի բաց թողնել կողմնակի կրքերն և անձնական շահերը՝ ի հարկին զոհելով նոցա մեր պարտքի կատարման: Ձլինել անգգոյշ, և ոչ դանդաղ. հաւատալ, հաստատ չուսալ՝ ու առաջ գնալ անվեհեր, միջակ ընթացքով՝ ոչ եղջերուի նման շտապել, և ոչ կրիայի նման դանդաղել. չվարանել, չկանգնել՝ վարանելով: Որովհետև այն խորհրդաւոր ստուերը, որ հետեւելով մեզ, դէպի նպատակ է մղում իւր գաւազանի տակ, կարող ենք՝ մեր կանգ առնելովը, արգելք լինել նորա ընթացքին, և փոխանակ յաղթական հանդիսանալու, կընկնինք ոտնակոխ նորա երկաթեայ և մահացու քայլերի ներքև. մինչդեռ նա մեր անշունչ դիակի վրայից անցնելով չառաջ կըխաղայ ծանրաքայլ, և կըշարունակէ իւր չաւիտենական շրջանը:



ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ | ՏՊՆ | Տարածք է | Պէտք է կարգաւ |
|-----|------------|-----------------------|------------------|
| է | ներ. 8 և 9 | ճանօթու- թիւնները՝ | ճանօթութիւնները՝ |
| Ը | վեր. 11 | կատաղեր- գութեան, | կատակերգութեան, |
| 14 | » 1 | ազոռականը | ազնուականը |
| 15 | ներ. 12 | գաղղերէն | գաղղերէն |
| 25 | » 6 | վրդովում էր, | վրդովում էր, |
| 28 | » 8 | անձնասպա- նիւթիւն | անձնասպանութիւն |
| 75 | » 4 | տղիտութիւն, | տղիտութիւն, |
| 113 | վեր. 5 | վրդովում՝ | վրդովում՝ |

